I-85

(h) 268.5

ՔՐՔՐՔՏ

ԱՄԱՍՓԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՑԱԿԱՆ
ԵՒ ԱԶԳԱՑԻՆ.

ԽՄԲԱԳՐՈՒԹԻԻՆ
ՄԻՍԻԹԱՐԵԱՆ ՄԱՏՐ ԱԹՈՌՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ
ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ.

ԹՐՂԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ

ՌՅԻԴ-1875

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԱԷԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ
Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.

X

ՀՐԱՄԱՆԱԻ

Տ· Տ· ԳԷՈՐԳԵԱՅ Գ·

ՎԻՀՃՓԵՒ ԵՒ ՍՐԲԱԶՆՏՓՈՑՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԵՑՆ ՀԱՑՈՑ·

ԱՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՋԳԱԿԱՆ.

ԹԻՒ Ա. — ՇՐՋԱՆ Ը. **1875** ՏԱՐԻ Է. — ՅՈՒՆՎԱՐ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՑ ԱՆՑԵԱԼՆ.

(Շարունակ. էջ չքնաղ ժԲՂ թուէն).

Ներսէս Շնորհալւոյ առ Մանուէլ կայսրն Յունաց փոխարինած պատասխանը շատ հետաքրքրական և խորին ուշադրութեան արժանի է, յորում անկեղծ սգով և քրիստոնէավայել շնմարտասէր եռանդեամբ՝ իբրև հրեշտակ լեմն խաղաղութեան՝ վարդապետական բանիւք կը ջանայ կայսեր կարծրացեալ սիրտը մաքրել և կակղացնել՝ յորդորիլով ի սէր և ի խաղաղութիւն՝ առանց ոչնչին տալոյ չափազրգիռ նախանձու, առանց հպարտութեան։ Իբր թէ կայսեր բուն միտքը չըհասկանալով, և ի վերին երեսս ձևացուցած երկուց եկեղեցեաց և աղտայ ի սէր և ի միութիւն առաջնորդելոյ անխոնջ ջանք կանանէ և կգովէ զնա, բայց կյաւելու ցոյց տալ թէ նոյն նպատակի հասանելոյ համար ծրպիսի խոհեմ և զգոյշ ընթացք բռնել պէտք է, և թէ եղած ատելութիւնք՝ հալածանքն և հայհոյութիւնք երբէք չեն կարող նոյն նպատակին օգնել, որք թէ և ձեռն շատերուն համար արդարութիւն, աստուածային օրինաց կատարման վրէժխնդրութիւն և երկնից արքայութիւնը ժառանգելոյ միջոցներ կհամարուին՝ ձեր իշխանութեան ներքև գտնուած մեր (Հայոց) եկեղեցիքը աւերելով, խաչերը խորտակելով, սեղանները կործանելով, պաշտամունքները ծաղրելով, պաշտօնեայքը նեղելով և հալածելով՝ այնքան չափազանց և առաւելութեամբ, զի անհատ ատենէն (քրիստոնեայ չեզող) անգամ այնպիսի վատութիւններ չեմք կրեր՝ գրած է՝ դեռ շատ նրիար և կարևոր ակնարկութեամբք և պարունակութեամբ։

Շնորհալւոյ օրով ևս պատրուակեալ միութեան խնդրոյ վերայ բաւական թըղթակցութիւնք և երթևեկութիւնք եղած են, սակայն Յոյնք՝ ինչպէս նաև Յունաց եկեղեցական պաշտօնէութիւնն և կայսր երբէք զոհ եղած չէին. և ինչպէս կարող էին զոհ ըլլալ՝ քանի՛ որ բուն խալսդախ նպատակը չէին կարող ի գլուխ տանել։ Ինչ ըստ կրօնականին և թէ ըստ ծիսականին ինչ որ խնդիր և առաջարկութիւն կլսուեցանէին, ի Հայոց և ի Հայրապետէ շատ գեղեցիկ և պարզ պատասխանները կտանային։ Հայց և այնպէս չէին հանդարտեր, և կտրնէին խիստ կրօնամո-

ը-ըն-ն կարծեցնել կամ ցուցանել, մինչդեռ կրօնամոլութեան ծայրայեղութենէ առնելի դառն և վատթար մի նպատակ ունէին, որում կարող էի առնել յարմար բացայայտիչ անուն տալ՝ եթէ անկախ չինէն հանգամանք ինչ արգելք չլինէր, սակայն չեմ կարող ևս այս խընդիրը դէթ դոյդն ինչ չարծարծած անցնել։

Յոյնք բաւական խորամանկ և նենգապատիր միջոցներ հնարելէ և ի գործ արկանելէ ղինի՝ այլ ևս համբերութեան տեղ չմնաց, և (1172 փ. Թուին) պարզապէս ինն խնդիր առաջարկեցին առ Շնորհալին Ներսէս։

Ննիերորդ (վերջին) առաջարկութիւնն էր՝ զի Հայոց Կաթուղիկոսի գրութէ ընտրութիւնը և հաստատութիւնը Յունաց Թագաւորն պիտի կատարէր։ Ընդհատիկ այս էր բուն և առաջին խնդիր, որոյ ներքև ծրագրեալ էր Հայոց Ընդի և Նիկեդեցւոյ աղատութիւնը և անկախութիւնը՝ ինչպէս նաև գոյութիւնը՝ հետզհետէ ջնջել։

Ներսէս Շնորհալի անշուշտ քաջ գիտէր վտանգը, և սիրտը ծանրապէս կըճմլուէր, բայց դարձեալ համբերատար ոգւով՝ խոհեմութիւնը և աշխարհավարական ուղղութիւնը շարունակեց, և պատճառելով որ՝ ինչպէս Հայոց՝ նոյնպէս Անտիոքոսացոց բաղմութիւն ի Միծ Հայս և Արևելեան Աշխարհի մէջ են, և առանց ընդհանուր եկեղեցական և ազգային ժողով կազմելոյ և ի միասին խորհելոյ և հաւանելոյ՝ ինքնին կամ մանաւանդ եղանակաւ չէր կարող բոլոր առաջարկութեանց վճռական պատասխանները տալ, որպէս զի Ընդի մէջ երկպառակութիւն չծագի և աւելի ընտսկար հետևանք յառաջանայ։ Ուստի ամեն կողմ հրաւէրներ ուղղեց ազգ առնելով շարժուած խնդիրները, և կխնդրէր աղօթից ապաստան լինել և պատրաստ կալ՝ զի երբ կրկին հրաւիրանաց թուղթեր ստանան՝ ժամադրեալ ժամանակին գան հասնին առ ինքն ի Հռոմկլա։

Սակայն դեռ հրաւէրը չերկրորդած՝ Ներսէս առ Ամուսած կփոխուի, և այսպէս կաղատուի յիշեալ ծանր վտանգի պատասխանատուութենէն և սրտամաշ հոգսերէնից։ Ի հարկէ եթէ Յունաց դիրք և լայնատարած տէրութիւն՝ հզօր, և նոցա դէմ Հայոց նոր ի նորոյ զարգացեալ վերայ եղած դիրք՝ տակաւ չլինէին, ինչպէս նաև Յունաց իշխանութեան և տիրապետութեան ներքև եղած երկիրներում շատ Հայեր չգտնուէին, երկնչելոյ աւելի և վտանգի տեղ չէր լինէր։ —

Երկին յիշատակութեան և գովեստից արժանի է Շնորհալեան այսպիսի վտանգաւոր ժամանակի և կնճռոտ խնդրոյ մէջ տագնապած միջոցում՝ Հայոց գրականութիւնը և դաստիարակութիւնը խրախուսել և առաւելապէս արդիւնաւորելն, և թէ սորա օրով մեր գրականութիւնը ծաղկեցաւ և ընտիր ընտիր երկեր ընդունեցաւ, բաւական գրական հեղինակներ ծագկեցան և զարգացան, գեղեցիկ հեղինակութիւնք և թարգմանութիւնք տարածուեցան շատ տեղեր, Հայկական լեզուի մէջ սպրդեալ ինչ ինչ խանգարմունքները ջնջուեցան, ինչպէս որ աւելի ճոխ և գեղեցիկ պատմագրուած է ազգային, եկեղեցական և դպրութեան պատմու-

թեանց մէջ, յորս լիովին կարող է գտանել հետաքրքիր ընթերցասէրն։

(Շարունակելի)

Վ. Վ. ՄԱՆԿՈՒՆԻ.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՒԱՏՔԱՑ, ՈՒՐԱՑՈՂԱՑ, ՀԵՐՋՈՒԱՑՈՂԱՑ ՆԻ ԲԱԺԱՆԵԼՈՑ ՑԵԿՂԵՑԻՈՑՆ ՀԱՅՈՑ.

ՑԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Զպատմութիւն Հալածչաց Եկեղեցւոյն Հայոց, ուրացողաց, հերձուածողաց և բաժանելոց՝ գրեցաք մեք հետևելով աղբիւրական պատմաբանից մերոց՝ Խորենացւոյն և Ցովհաննու Կաթուղիկոսի յաղագս պատճառութեամբ ընդ Ձամչեանն կոչեցեալ պատմագրութեան, որպէս և ղԾողովոց Եկեղեցւոյն Հայոց իբրև առաջին հատոր սորին հանդերձ Եկեղեցական կանոնագրութեամբքն, ըստ գլխակարգութեանց Աղուանից Մխիթարայ Արքեպիսկոպոսի Սալանդեան՝ կոչեցելոյն ի նմանէ Պատմութիւն Եկեղեցւոյն Հայոց յաղուսակս համառօտեալ տըպագրեալ ի Մոսկով յամի 1841, որ է ցանկ միւսն գլխակարգութեանց պատմութեանս, որպէս և Ծողովոյն Կաթուղիկոսաց, Թագաւորաց, Նահատակաց և Թարգմանչաց, բովանդակելոց ի վեց աղուսակս. զորոց ամենից զպատմութիւնն յանձն առեալ եմք գրել ըստ այմ կարգի, եթէ Տէր յաջողեսցէ մեզ յետ այսորիկ, մաքրելով զամենեսեան անցս ի սուտակասպաս և ի պատուաստեալ պատմագրութեանցն Ձամչեան, որ զանուն դնելով այնմ եռահատոր մատենի Պատմութիւն Հայոց, ստուարացուցեալ է զայնս գրեթէ բովանդակ ստութեամբ բանից ի հաճոյս Հռոմայեցւոց ընդ դէմ ստուգութեան գրուածոց նախնեացն մերոց մատենագրաց և պատմաբանից, և այս յաւէտ ի վէպս պատմութեան անցից Կաթուղիկոսաց Ազգիս ի յետին դարս. որոց եկեղեցական կառավարութիւն ազգի մերոյ եղեալ է ընդ տեսչութեամբ և ընդ իրատաստութեամբ պետին Հռոմայ շինուածոյ թըղթոց և ինքնահնար նամակաց յանուն Կաթուղիկոսաց Ազգիս, որոց և ոչ հետք երևին առ ազգային պատմագիրս և ոչ ի դիւանս Կաթուղիկոսաց մերոց.

Այս եղև մեզ առիթ զվեպասեր գրելոյ զՊատմութիւն Եկեղեցւոյս մերոյ ի վեց առանձին գիրս ըստ վեցից աղիւսակաց Սալանդեան Մխիթարեան՝ որպէս ասացաք, յորոց նախ զերկուս զյատկիկ պատմութիւն Ծողովոց և զպատմութիւն Հալածչաց Եկեղեցւոյն Հայոց, գլխաւորելով, զչորեսին ևս ըստ այմ կարգի գրել ունիմք Տեառն յաջողութեամբ յետ այսորիկ, եթէ ձեռնտու լինի մեզ և ժամանակն։

ԱԲԵԼ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Հայոց Եկեղեցւոյն հալածիչք, ուրացողք, հերձուածողք բաժանեալք, բառասունք։

ՑՈԴ. Ա.

Անանէ և Առաքրուկ ընտրեալք հալածիչք։

(Ամք Տեառն 34)։ Անանէ որդի Աբգարու յետ մահու հօրն թագաւորէ Հայոց Յունդեսիա. և Առաքրուկ քեռորդի Աբգարու հակառակ Անանեայ՝ ի Հաւարշան. և նախարարքն Հայոց թողեալ զհաւատս և ոչ անագան ի կռապաշտութիւն դարձեալք, յայն ընդկերին և զմիտս Առաքրուկ՝ մերժելով զօրէնս քրիստոնէութեան, յոր ինքեանք յերկիւղէ Աբգարու կնդձաւորութեամբ առ երեսս զառաջինն հաւատացեալքն էին։

Այսպէս և Անանեայ զբրիստոսական հաւատսն թողեալ, բանայ զտաճարս կռոցն Յունդեսիա և խորհէ բառնալ ընդ փրկչական պատկերն որ ի վերայ դրան քաղաքին, դժկամակեալ ընդ գործս ժողովրդեան որք ի պահիս պատկերին կանխէին։ Այլ Ադդէ եպիսկոպոսի աստուածային յայտնութեամբ իրացն կանխագէտ լեալ, յանյայտս ծածկէ յորմն ի գիշերի զաստուածային պատկերն. առ որ և խորհուրդ թագաւորի ի մտացն անկանէր յաստուածային խնամոց։

Այլ սա ինքն Ընանէ լիտ այսորիկ հրամայէ զսրուներս ոտիցն հատանել սըրբոյն, յաղագս ոչ առնելոյ նմա խոյր ինքեան, որպէս և հօրն իւրում Եբդարու. բայց և այնպէս որով մահուամբ և ըզսուրբն երթալ ի կենաց, նովին և ինքն վճարէր զկեանս. զի ի նորոդութեան սպարանից իւրոց Աղեսիա, սիւնն մեծ կձեայ, առ որով Ընանէ կայր ի զնին, հոսեալ ի վերայ և խորտակեալ մանրեալ զոտս նորին՝ սպանանէ զնա ի չորրորդ ամի թագաւորութեան իւրում:

Իսկ Սանատրկոյ՝ որ հաւատացեալ էր ի Քրիստոս և մկրտեալ ի Թադէոսէ, և թողեալ զնոյն լիտ Եբգարու ի հրապուրանաց նախարարացն իւրոց ըստ Յովհան. Պաթուղիկոսի՝ երդուեալ բնակչաց Եդեսիոյ լիտ մահուն Ընանեայ մի՛ մեղանչել ի քրիստոնէութիւն նոցին, առնուլ զքաղաքն, և տեսլդումն գտեալ ուխտին, ի սուր հանել զամենայն զաւակ տանն Եբգարու բաց յոպջկանց և ի դշխոյէն. և լուեալ զդարձ դեսպանացն Հռովմայեցւոց առ ինքն արանց հնդից ի Քրիստոսական հաւատս; որոց ղկնաւորի Ասկի ճանաչելոյ անուն ի ձեռն Թադէոսի առաքելոյ ի սահմանս Միջագետաց, կոչէ առ ինքն ի Շաւարշան զառաքեալն սուրբ և սպա-նանէ զնա անդ, ընդ որում և զսուրբ կոյսն Սանդուխտ զդուստր իւր վասն հաստատուն կալոյ նորա ի հաւատս Քրիստոսի ուսեալ ի սրբոյ առաքելոյն:

Յաքանչելիս անդ նահատակութեան կուսին Սանդխտոյ գտաւրն իւրոյ, այն ինչ հաւատայ ի Քրիստոս նախարարն մեծ Սամուէլ կոչեցեալ, զբարեալ ընդ այն Սանատրկոյ՝ բևեռս հրացեալս վարսէ յուս նորա, որ կատարեցաւ ի Քրիստոս յիշատակեալ Յայսմաւուրս ի 23. դեկտ. ընդ սմին սպան արքայ Սանատրուկ և զտիկինն մեծ Օազմանդուխտ անուն ընդ նորայնոցն ամենեցուն ոգւոց իբրև երկերիւրոց, որք հանդերձ տիկնամբն հաւատացեալ ի սմին ժամանակի մկրտեցան ի Քրիստոս:

Եւ զի յայսմ ժամանակի Խարդուղիմոս առաքեալ էս դիմեալ ի Սասրին Հայս յաշխարհ Ընձևացեաց ընդ իւր ուներով զպատկեր սուրբ Աստուածածնի նկարեալն ի Յովհաննու Ավետարանչէ, քարոզութեամբ աւետարանին բազմացուցանէր զեկեղեցիս Քրիստոսի և հաստատէր ի հաւատս զամենեսեան զնոսա. յորս և զքոյր Սանատրկոյ զթագուհին և զհազարապետ նորին: Սոյն Սանատրուկ կալեալ զքոյր իւր, սպան զնա և զառաքեալն սուրբ մորթ ընդ գլուխն հանեալ խաչեաց Աբգարեանոս քաղաքի ի խորին Հայս յաշխարհին Ասորեից, ուր թաղեցաւ սուրբ առաքեալն. զայս քաղաք Աբգարեանոս, ուր նահատակեցաւ սուրբ առաքեալն, Յովհ. կաթուղիկոս կոչէ Ըրաքենան:

Այսպէս Սանատրկոյ հալածող լեալ եկեղեցւոյն Հայոց ի Քրիստոսական հաւատոյն յընթացս երեսուն և չորից ամաց թագաւորութեան իւրոյ, յետ վերջնոյն դարձին իւրոյ ի կռապաշտութիւն ի սկզբան թագաւորութեան իւրոյ հնձեալ ի կամս նախարարաց՝ մեռանի նեռահարեալ յանգիստս ի ծառայէն, ի զբօսանս որսոց, յամի Տեառն 67, ոչ ինչ զերևելիս ցուցեալ ի կեանս. ըստ որոյ և ոչինչ յիշատակաց արժանի համարեցաք, ասէ Խորենացին:

ՅՕԴ. Բ.

Աբդաազդ արէայորդի Նաճապաֆէէ Ոռհեցի:

(Ամք Տեառն 107)։ Թուռն Անաստրկոյ Երուսաղդ երկրորդ որդի Երուշխի Ե. ի վեշտասաներամեայ իւրում հասակի ա- ոհիմ գտեալ զղարձ Սուքիասեանց ի Քրիստոսական հաւատս ի քարոզութենէ սրբոյ Ասկեանց յարքայական քաղաքն Երուշատ, նահատակէ զսուրբսն հնգեսին եւ ի լեառն Ծաղկեոյ ի Ծաղկոտն գաւառի յամսեան Հփրատայ. ի պատճառս ազգականութեան իւրեանց ընդ Սուքիասեանս ի կոչմանէ մօր իւրոյ Սաթինկան, որ զայսպիսի յիմն ունի զպատմութիւն:

Յետ իբր քառասուն եւ երիք ամաց սրբոյ առաքելոյն Թադէոսի կատարմանն ի Քրիստոս նահատակութեամբ ի Սանատրկոյ, աշակերտեալք սրբոյն սուրբ Ասկեանք հնգեքին ընկերք, որք դարձեալ էին ի Քրիստոս յաւուրս դեսպանութեան իւրեանց ի Հռովմայեցւոց առ Սանատրուկ, աստուածային ազդեցութեամբ իջեալք ի կրօնաւորական վայրաց ի լեռնէն Ծաղկեոյ, մտանեն առ արքայ Երուշէս Ե. յարքունի քաղաքն Երուշատ, եւ առ Թադուհին Սաթինիկ, քարոզել զքրիստոնէութիւն եւ զաստուածութիւն Քրիստոսի եւ զկուսոյն սկարութիւն: Այլ արքայի ի զբաղանս պատերազմաց լեալ: Ասսին նոքա զնոյն բանս առ Սաթինիկ. առ որում լուեալ եւ ազգականաց Թագուհւոյն ևկեղոյն Ալանաց, աշակերտեցան սրբոյն հաւատացեալք ի Քրիստոս բոլորով սրտիւ. որոց զհաստատութիւն հաւատոյն ի Քրիստոս տեսեալ սրբոյ Ասկի քահանային, մկրտէ ի գիշերի զամենեսին զնոսա զոգիս իբրև ուրախ յակունս Եփրատայ, եւ ի նշան ընդունելութեան նորա շնորհաց Հոգւոյն սրբոյ, փոխեալ զանուն նոցին, առաջնոյ նոցին անուամբ կոչեաց Սուքիասանք:

Եւ ի միւսանգամ դալ սրբոյ Ասկեանց յարքունիս ի քարոզութիւն՝ որդիք արքայի որդիք Սաթինկան իմացեալ զգալն ազգականաց իւրեանց, հալածեն զնոսա թշնամանօք ի դրանցն արքունի, ընդ որս խոյս եառեն եւ նոցին աշակերտեալքն. այլ իբրև տեղեկացան եթէ ընդ Ասկեանն գնացին եւ նոքա, կրտսեր որդիք Թագուհւոյն ընդ երիցագոյնն Երուսաղդայ հանդերձ Թիկնապահօք յարձակեալ ի բնակարանս սրբոցն; եւ տեսեալ զՍուքիան, ազատչէին դառնալ յետս ի քրիստոնէութենէ, զնոյն խնդրէին եւ ի սրբոց Ասկեանց յորդոր լինել նոցին. այլ յանձնառն պնդել նոցա զնոսա ի հաւատսն, բարկացեալ Երուսաղդայ հրամայէ սրբանեկաց իւրոց առ եաղղր իսկ զսուրբ Ասկեանսն խողխողել:

ՅՕԳ. Գ.

Բառանձ Նաճապաղ Սահեանց:

(Ամք Տեառն 130)։ Սուքիասանք սրք թագաւորազունք էին գլխաւորք ի պալատական կարգէ ի դրան արքային Ալանաց ողիք իբրև ուրախ ազգականք Սաթինկայ դստեր Թագաւորին Ալանաց, որք հարանածուք լեալք Սաթինկան յաւուրս դշնոյանալոյ նորին մերում Երուսաղէմի Ե. ի որդւոյ Սանատրկոյ, ճնացեալ ի Հայս յարքունիս անդր, աշակերտեցան սրբոց Ասկեանց ի հաւատս Քրիստոսի, և

մկրտեալ յանուն Յիսուսի ի ձեռն սրբոյ Ոսկի քահանային յակոնս Երիցատայ՝ կային անդէն ի ջրաբաշխ և ի ծաղկաւէտ տեղիս, որոց գլխաւորի անունն կոչեալ Սուքիաս՝ որ յառաջն էր Խահադրաս կամ Խարաքադայ, նորա անուամբ և ընկերք նորին Սուքիասանք կոչեցան։

Եւ մինչ ի պատճառս դարձի սոցին սուրբ Ոսկեանքն զնահատակութիւն ընկալան ի հրամանէ Երատազդայ որդւոյ Սանատրկոյ իւրերին անդ, թագեալ անդ զմարմինս սրբոցն, և զի յայտնի իսկ եղեւ այնուհետեւ դարձ իւրեանց ի Քրիստոս ի դուռն ալքունի, և առ խոտաւէտ լինելոյ վայրացն մարմինք նոցին սփարաբէին, ապա յետ ոչ բազում ժամանակաց փոխեալ զինակութիւն իւրեանց՝ գան ի ջրաբաշխ լեառն ի Խազրևանդ գաւառի առերի Նպատ լերին. և յաւելան օր ըստ օրէ ի կարգ և ի հնշտակական կրօնս. որ յետոյ կոչեցաւ և լեառն՝ յանուանէ գլխաւորի նոցին Սուկաւ, կամ առ անպատրաստ լինելոյ այնորիկ՝ կոչեցաւ Սուկաւ ի Հռովմէական ձայնէս Սիքքուս, այս ինքն չոր, ցամաք։

Ընդսպէս թագնութեամբ ի լերինս այսմիկ կրօնաւորին սոքա ամենեքեան ցամ Տեառն 130, մինչև ի ժամանակս թագաւորին Ալանաց Գուդիանոսի կամ Դատիանոսի. որոյ ի դնելն կարգ ի զօրս իւր՝ ստուգեալ յոմանց երթևեկաց ի Հայս, եթէ նոքին արք յարքունի գնդէն վաղ ուրեմն ընդ Սաթենական դշխոյի չուեալ յաշխարհն Հայոց, հաւատացեալ են ի Քրիստոս և զկեանս իւրեանց վճռեք ի լերինն անցուցանեն, ապա առաքէ զղօրավար Խառահլա անուն, ի խոշտ և ի խընդիր արանցն, հրաման տուեալ կամ պարգեւաց խոստմամբ հաւանեցուցանել, և դարձուցանել, և կամ սրով բառնալ զնոսա ի չգալն. որոյ եկեալ ի Հայս և առաջնորդութեամբ լըռեաց դիմեալ ի լեառն ի Սուկաւ՝ եգիտ զսուրբ Սուքիասեանսն, և իբրև յորդորանաց զօրավարին ոչ մատուցանէին ունկն և զպարգեւս խոստմանցն ևս առ ոտն հարին՝ և ոչ զաշխարհային փառացն զկնի երթալ կամէին, թողեալ զփառս անանցական կեանց, ապա սուր ի վերայ եդեալ զահճաց զօրավարին կոտորեցին զամենեսեան զնոսա անդ ի լեառն ի Ճգնարանս նոցին յամի Տեառն 130։

ՅՕԴ. Դ.

Խոսրով Նախաբար Նախարակ. էրէսթանէից։

(Ամք Տեառն 215)։ Յաւուրս խոսրովայ առաջնոյ որդւոյ Վաղարշայ, որ թագաւորէ Հայոց յամի Տեառն 214, գտանէին բազում քրիստոնեայք յաշխարհին Հայոց ուրեք ուրեք. սա վասն զի ձեռնարկեալ էր ի նմին ժամանակի ի շինութիւն բազում քաղաքաց, աւանից և ապարանից՝ ևս և իջևանաց, զբազումս ի նոցանէ ի քրիստոնէիցն ածէ ի գործ շինութեանցն և ի գառն աղեւսարկութիւնս, և զբազումս ևս նահատակէր ըստ յիշատակութեան Խորենացւոյն ի Գիրք. Բ. 72, առեալ ի Փերմելիանոսէ եպիսկոպոսէ Կեսարիոյ Կապադովկացւոց՝ յաշակերտէ Որոգինեայ։

Եւ բան Խորենացւոյն է. ‘‘զրէ բազում վկայեալ և ի խոսրովու ի մերում աշխարհիս, համայն և յետ նորա օտարք յօտարաց. բայց զի ոչ ճշմարտութեամբ ոճով

պատմէ, և ոչ զանուանս նշանակէ, կամ զտեղի կատարմանցն, ոչ ինչ կարևորագոյն համարեցաք երկրորդել,,: Գիրք Ժ.75:

ՅՕԴ. Ե.

Տէրտէր ընտրեալ հալածեալ և նահապետիէ:

(Ամք Տեառն 287): Որպէս հռչակաւոր է վրէժխնդրութիւն Տրդատայ ի սրբոյ Գրիգորէ մեծ Ժ. Լուսաւորչէ յաղագս չմատուցանելոյ նորա զոհս դիցն Ընահատակն Յազկայ, առ որ յարեալ էր մեծի առնն, թերևս քաւել մտադրելով զյանցանս հօր իւրոյ ի սպասու ծառայութեան Տրդատայ գտանելով հարուստ ժամանակաւ, այնպէս հռչակագոյն և է նորին ինքեան արքային Տրդատայ հրաշալի դարձն ի քրիստոնէութիւն ի ձեռն սրբոյն Գրիգորի, յոյր ձեռն նուէրս Ընտրեալ մեծ մատուցանել զառաջինն կամէր. ուստի և հռչակաւոր և հանդիսական այս է դործ նորին Տրդատայ. զի որում նախ զնահատակելն հրամայեր յաղագս դիցն անարգանաց, ապա ի ձեռն նորա և ըզքրիստոնէութիւնն ընկալաւ:

Ապա ըստ այսոցիկ երկուց ներհակակից գործոց՝ գասեալ լինի սուրբն Տրդատ ըստ առաջնումն ի կարգս հալածչաց և նահատակչաց եկեղեցւոյն Հայոց, և ըստ երկրորդին՝ ընդ սուրբս և ընդ նահատակս և ընդ խոստովանողս Հայոց եկեղեցւոյն:

Երդ սա ինքն Տրդատ ընկալեալ զթագաւորութիւն ի Վէոկղեսիանոս կայսերէ Հռովմայեցւոց, առ որում քաջագործեալն էր ի մանկութենէ, իբրև գայր ելանէր յԱկեղեաց գաւառ ի Հայաստան, ի շրջել նորհս Ընտանեայ վարկուցեալ զայն պատիւ արքայական, զոհս գոհութեան նմին մատուցանէ. ինոյն հրամայեալ և Գրիգորի վանական ի մեհեան նորին հանել. այլ ընդ չառնուլ նորա յանձն զայն պաշտօն առ դիւն, մեծաւ ափշութեամբ զարմացեալ Տրդատայ ընդ Գրիգոր, գնէ զնա յարդելանս, և առ առաւել բռնադատել զսուրբն ի պաշտօնս կռոց, իբրև զանարգանս և ինմանէ լսէ ընդ սքանչութիւն դիցն, ապա հրամայէ մատուցանել զնա ի չարչարանս տանջանաց, յիտ ոչ ոյ լուեալ, եթէ որդի է Ընտակայ, առաքէ զնա ՅԵրասխ քաղաք արկանել ի խորվիրապ մահապարտաց: Ա՝ յետ ժամանակաց նահատակէ և զսուրբ կուսանան Հռիփսիմեանս՝ վասն խոստովանութեան նոցին Քրիստոսական հաւատոց:

ՅՕԴ. Զ.

Աբեղբէ հայ է ձեռնադիր նոցին ցվերջն:

(Ամք Տեառն 315): Երեսունիք յարեւագաշտութենէն Հայոց մինացեալք յաւուրց կռապաշտութեանց նոցին ի Հայաստան, թէ և բարձաւ այսպիսի տարբապաշտութիւն Հայոց այն ինչ դարձաւ ի քրիստոնէութիւն ընդհանուր Հայաստան ի ձեռն սրբոյն Գրիգորի ի սկզբան չորրորդ դարու քրիստոնէութեան, բայց այսու ամենայնիւ հետք ինչ նորա մնացին յազգս մեր ի Միջագետս. զի գեօղք և աւանք ինչ յազգ սահմանաց Հայաստանեայց խառն ի Հայոց և յօտար ազգաց մնացին ի հեթանոսութեան ի ծածուկ, ընդ որս և Երեսունիքն կոչեցեալք, տեւեալք ի մոլորութեան իւրեանց ի բազում ժամանակս և մերթ ընդ մերթ ի վեր երևեալք որպէս յաւուրս սրբոյն

Մեսրովբայ, Գրիգորի Մագիստրոսի և Նիբիսի Հնորհալւոյ։

Յաւուրս Մեսրովբայ ի վերջն չորրորդ դարու ի Գողթան գաւառի ի վեր. երեք աղանդ Արևորդեացն, որ՝ որպէս յիշատակեցաւ՝ ճեացեալ ի ժամանակէ սրբոյն Տըրդատայ ի Հայս. զոր լուեալ Մեսրովբայ, և անդր հասեալ, ձեռնտուութեամբ Հաբաթի իշխանի տեղւոյն, բառնայ և արմատախիլ առնէ զայն աղանդ. ուր և նշանք աստուածայինք լինէին (ասեն Խոր. և Կորիւն) որպէս առ սրբովն Գրիգորիւ, հալածական լեալ դիւքն մարմնաւոր տեսլեամբ՝ անկանէին ի կողմանս Մարաց։

Յետ քան և վեց ամաց իբրև նա ինքն Մեսրովբ ի բաժնին Յունաց բացեալ ըզդպրոցս, սերմաներ ի սիրտս մանկանց ևկեղեցւոյ զվարդապետութեան սերմունս ի հայրենի լեզու, և ընդ նմին հալածական վարեր ի գաւառաց անտի զնոյնօրինակ աղանդաւորս ըստ բանի Ստեփանոսի Պաարիարգին՝ գրեալ առ սուրբն Սահակ, կոչելով զայն՝ աղանդ Կորբորիտոնաց՝ ըստ գաւառ դարձեալ զնոյն աղանդ ընձիւղեալ ի Գողթն. զոր յառաջնումն սպառ սպառ սրբեալ էր անտի. և առ այս վերադարձեալ նորա Աբրահատ, հասանէ անդր ի Գողթն. զոր և ըստ առաջնումն օրինակի ի ձեռն իշխանի տեղւոյն Գիւտայ որդւոյ Հաբաթայ երկրէ նոցին. և զբոլ դարձոյցն, աղաչեաց զնպիսկոպոսս տեղւոյն պՄուշեղ անուն, անդարձ զնոսին պահել ի դիտաւորթիւն ձշմարտութեան. նոյնպէս և առ Գարգմանացւոց դարձոյց զաղանդաւորսն հանդերձ խուրս անուն իշխանաւ նոցին, որք ամենեքեան սոքա և Խաղասականք և Գարգմանականք՝ ի սերնդոյն Հայկայ էին [1]։

(Շարունակելի)։

ԱՐԻԼ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

---

(1) Զայսմանէ Կորիւն այս օրինակ բերէ ի յիշատակ. «Առեալ այնուհետև երանելւոյն (Մեսրոբայ) զհաւատացեալսն իւր, դիմեալ իջանէր յանկարգ և յանդարման տեղիս Գողթան. այլ և ընդ առաջ ելանէր նմա իշխանն Գողթան. այր երկիւղած և աստուածասէր ըստ աշակերտաց Հաւատոցն Քրիստոսի։ Իսկ երանելւոյն վաղվաղակի զաւետարանական արուեստն ի մէջ առեալ, ձեռն արկանէր զգաւառսն հանդերձ միամիտ սատարութեամբն իշխանին . . . ի հայրենեացս աւանդիլոյ, և ի սատանայական դիւապաշտ սպասաւորութենէն ի հնազանդութիւն Քրիստոսի մատուցանէր։ Եւ յորժամ ի նոսա զբանն կենաց սերմանեալ յայտնի իսկ բնակչաց գաւառին նշանք մեծամեծք երևէին կերպակերպ նմանութեամբ դիւացն ախտաստական լինելով անկանէին ի կողմանս Մարաց»։

ՊԱՏՄԱԿԱՆ

ԱՍՊԵՏՈՒԹԻՆ ԵՒ ԽԱՉԱԿԻՐՔ·

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԼԱՏԻՆԱՑԻՈՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ·

(Շարունակութիւն։)

Կոնրադ Մոնֆէրրա պառնէրդէդ ըռֆաուր երուսաղէմայ է 1192։

Երուսաղէմայ Թագաւորութեան աւագանիք իմանալով Ռիշարի մեկնելոյ դիտաւորութիւնը՝ յայտնեցին նմա Թագաւորական իշխանութեան մի աւելի արժանի անձի յանձնելոյ կարեւորութիւնը։ Համոյն զօրքն պահանջելով, որ յանձնուի Կոնրադ Մօնֆէրրա Տիւրոսի իշխանին, Ռիշար յօժարեց եւ դրեց նորան գալ ընդունելոյ Թագաւորական գաւազանն եւ Ծիրանին. այդ Նամակդ յանձնեցաւ Կոնրադին Ապրիլի 27-ին 1192 ամի. 29-ին սպանուեց նա ի փողոցի Լերան իշխանի 1) երկու դաղտնի պատուիրակաց ձեռօք, որք խրելով իւրեանց դաշոյնքն ի սիրտ նորա, աղաղակեցին «Դու չես լինելու մարդրաւ (սահմանակոմս), դու չես լինելու արքայ»։

(1) Մնասականերորդ դարու վնասակար ղէպքերից մինն է Լերանց կամ Ցելուզակաց մխաբանութիւնն, որոյ հիմնադիրն եղեւ Հասան Սաբբա ոմն, որ Եգիպտոսի Ֆաթմէ խէլիֆայի պաշտաօնէի մինից սովորելով Իսմայէլական — կ օնստանտական բոլոր գաղտնիքն հռչակեց իւրեան առաքեալ։ 1090 ամի գալով Գիլեն գաւառն առանձնացաւ մի ղղեկի մէջ մինչ 55 տ առանց հաղորդակցութեան. այդ միայնակեցութեան մէջ մի միտք դրացաւ, — կործանել Աւսիոյ բոլոր տէրութիւնքն իւր մոլեռանդ արբանեակաց ձեռօք, վասն զի կարգն բաժանուած էր յերիս դասս. Դաշի պաշտօնատարք, Ռէֆիկ ընկերք, Ֆըտէվի անձնուէրք. ետքն որոշող ղեկտան էր սպիտակդոյն վերարկու, կարմրագոյն գօտի. գլխաւորն կը կոչուէր Շէյխուլ-ջիպալ կամ Իշխան լերանց. վասն զի միշտ կը նկրտէին լերանց վերայ եղեալ անառիկ բերդօրայքն տիրապետել։ Որոնց որ կամենումէին ղէպ իւրեանց յանկուցանել, կերցնում էին մանրագործ պէս երեւակայութիւն դրգռող մի արմատ։ Ցելուզակաց դաշոյնի առաջին զոհն եղեւ, Մէլիք — Շահի իշխանութեան նեցուկ Նազըմ — ուլ-մուլքն, որին հնտեւեց յոլով օրաւակեալց իշխանաց կատարածն անձնանուիրաց ձեռօք։ Արենարբուն Հասան լցուր բոլոր լերինքն արեամբ, մինչեւ անգամ թափեց իւր երկու զաւակաց արիւնն ամենադոյզն անհաղանդութեան պատճառաւ, վերջապէս այդ կատաղի դաղանն որ վայրիկ մի եւ ահ տակն ու վերայ սիրտ անէր բոլոր Աւսիոյ մնաւ 1124-ին ի խորին պառամութեան։ Բայց որովհետեւ սոյնպիսի մխաբանութեանց կեանքն կարճատեւ է, ուստի եւ այդ մխաբանութիւնդ ևօթանասուն տ ապրելէն զկնի վերջացաւ. Մանդու քահարաց խանի ձեռօք։ Թրգ.

Ցաւելով ի ղէպ է զի Ռիշար ակամայ յօժարել էր Կոնրադի ընտրութեան տեղեակ լինելով նորա Սալահատինի հետ արած դաշնակցութեան, ուստի ընդհանրապէս նորա հաւանութեան տուին այդ պատնուամբ։ Այս ամբաստանութիւնս Թէեւ հաստատուում է մի քանի եղելութեամբք, սակայն պատմութիւնն ոչ կարէ ընդունել որպէս վճռացուցիչ վաստաք։

Հենրիկոս դը Շամպայն Ֆրանսերդէդ ըֆաուր։

Կոնրադի վախճանման ժամանակին 10,000 Գաղղիացիք Բուրգոյն դքսի գնդէն դառնալով Տիւրոսի դրան առաջեւ՝ հրամայեցին բանալ. Մարդրաւի որք կին Իզաբէլն, որ յղի էր, յայտնեց Թէ քաղաքն միայն Ռիշարին եւ Երուսաղէմայ դալոց Թագաւորին պիտի յանձնէ։ Եւ որովհետեւ Շամպայնի կոմսն հասաւ այդ միջոցին ի Տիւրոս, հոգեւորականք եւ սեպուհք առաջարկեցին նմա իշխանութիւնն եւ Իզաբէլի ծնունդ, հուսկ յետոյ դնացին խնդրել Ռիշարէն յանձնել նմա նոյնպէս եւ Երուսաղէմայ Թագաւորութիւնն։ Բոլոր զօրքն հաւանեց այդ ընտրութեան, Հենրիկոս հրատարակուեց արքայ Երուսաղէմայ ի կնութիւն ածելով զԻզաբէլ ի 5 Մայիսի 1192։

Ա.ռ ի փոխարինութիւն Գուիտոն Լուսինեանի վրնասուց, Ռիշար պարդեւեց նմա Կիպրոսի Թագաւորութիւնն, որպէս մի առանձին պատուիրակ, որ տեւեց մինչ երեք դար։

Թշնամութիւնք չը յամեցին նորէն ծագումն առնելոյ, վասն զի Սալահատին դաղտագրել էր որ եւիցէ տեսակ բանախօսութիւն։ Ռիշար երկարածգեց իւր դնալն յայտնելով Թէ մտադիր է տանել Հենրիկոս Թագաւորը Երուսաղէմ։ Սակայն նորա բոլոր զործողութեանց մէջ նշմարեալ վարանմունքն եւ դանդաղանքն Թոյլատրեն հաւատալ՝ Թէ նա մի այլ դիտաւորութիւն ունէր։ Վերջապէս Յունիսի ամսում նշանակեց մի տեսակ դատաւորաց ատեան բաղկացեալ ի հինգ Գաղղիացւոց, հինգ ի Տաճարականաց, հինգ Ա.սպնջականաց եւ հինգ յերկրացւոց առ ի քննել՝ արդեօք պատեհ է հրաժարել յառմանէ Երուսաղէմայ եւ պահարել զԹամասկոս, զՊէրութ եւ կամ խաղալ Եգիպտոս։ Դատաւորք յայտնեցին, որ ուղեւորութիւնն Եգիպտոս կարեւորադոյն էր քան սի այլ ծռոնարկութիւն։ Գաղղիացի խաչակիրք ընդդիմանալով այս վճռի՝ մի բուռն խռովութիւն ծագեց Ռիշարի եւ Բուրգոյն դքսի

մէջ, որոյ արգասիքն եղեւ բոլորովին բաժանումն, զօրքն բանակեցաւ ի Բամլա:

Ռիշար գնաց յՍ.քեայ կազմել իւր ուղեւորութեան պատրաստութիւնքն, մինչդեռ ի բանագնացութեան էր ընդ Սալահատինի, թէեւ Թշնամութիւնք դեռ շարունակէին: Սալահատին պաշարեց զՅոպպէ, բայց Անգղիոյ Թագաւորն փութալով յօգնութիւն, յՕգոստոսի 8 ին կանգնեց մի յաղթանակ, որով ջնջեց իւր համբաւից այն բիծն, որ իւր վերջին ժամանակի վարքն աղարտել էին:

Սեպտեմբերի 1 ին ի Յոպպէ, ուր Անգղիոյ Թագաւորն հիւանդ էր, կուգային Սալահատինի հետ մի եռամեայ զինադուլ: Մի երկար սահման սկսեալ ի Յոպպէ մինչ յՍ.քեա դրուեցաւ Քրիստոնէից. Ասկալոն՝ Գազա, Դարոն հիմնայատակ եղեն. Անտիոք եւ Տրապօլիս դաշնադրութեան մէջ յիշուեցան, եւ ոչ մի բան սահմաններին ի պատերազմի գերեալ քրիստոնէից ազատութեան կամ ճշմարիտ խաչի վերադարձման մասին: Զինադուլի սաորագրութենէն վկի, անվիջապէս վաճառականութիւնն ճաստատուեց ի մէջ Քրիստոնէից եւ Մահմետականաց, նոյնպէս Երուսաղէմայ ուխտագնացութիւնն սկսուեց, բայց որովհետեւ յոլով խաչակիրք օգուտ քաղեցին այդ հոյլատուութիւնից, ուստի Ռիշար պահանջեց Սալահատինից ընդունել միայն նոցա, որք կունենային ի ձեռի՝ իւր կամ Շամպայն կոմսի հոյլատութեան հրամանագիրն, որ մերժից բոլոր Գաղղիացւոց: Սալահատին յայտնեց, որ իւր կրօնքն արգելում էր իւրեան յետս դարձնել մի ուխտաւոր անկարեւոր պատճառաւ, եւ նա ընդունում էր մարդասիրաբար բոլոր ուխտաւորքը, որք պային յերկրպագութիւն Ս. Գերեզմանին: Անգղիոյ արքայն հողեց զպաղեստին յ9 Հոկտեմ. 1192, առանց տեսանելոյ զերուսաղէմ:

Ռիշար զգաստացաւ իւր կրած աղետեօք եւ լսհասկացաւ, որ չէ պարտ արհամարհել մինչ անդամ անզօր թշնամին: Չհամարձակելով անցանել ի Գաղղիոյ, Գերմանիոյ ճանապարհն բռնեց. նաեւ ալեկոծութեամբ անկանելով ի կողմանս Աւստրիոյ, Ռիշար կամեցաւ ուխտաւորի զգեստով անցանել Լէոպոլտ դքսի սահմաններից, բայց վրէժխնդրութիւնն չար ընդ միշտ արթուն է: Լէոպոլտ բայց ի իւր նախատանաց ոխից ունէր եւ իւր ազգական կոնրադ Մօնտֆէրրայի մահուան վրէժխնդրութիւնն, որոյ պատճառն Ռիշարին կը տար. իրազեկ լինելով Անգղիոյ Թագաւորին հասած արկածից, նորա ետեւից պնդեցաւ: Ռիշար ճանաչուելով, բանտարկուեց եւ եղաւ ի դիպահոջ ի դղեակն Տիէրէնստէնի՝ Հադամար ասպետի պահպանողութեան ներքոյ: Գերմանիոյ կայսր Հենրիկոս Դ.ն*), ըստ որում կատէր զարքայն Անգղիոյ նորա թանկրէդի երկու Սիկիլիայից Թագաւորի հետ ունեցած մըտերմութեան մասին, գնեց գնա Լէոպոլդ դքսից 60,000 մարկով եւ բանտարկեց ի դղեակն Թրիէֆլի, ուր քաղցրութեամբ կը վարուէին իւր հետ: Աւատական վարչութեան օրինաց հետեւելով վեհապետի կալանաւորութիւնն արդելեալ էր, բոլոր հպատակաց պարտաւորութիւնն էր աճապարել ի փրկութիւն իւրեանց արքային, ուստի Անգղիոյ եպիսկոպոսքն, ասպետքն եւ ժողովուրդն փութացին հանգանակել եւ վճարելով պահանջեալ դումարն՝ ազատեցին իւրեանց արքայն:

Ռիշարի գնալէն 5 ամիս յետոյ մեռաւ Սալահատինն ի 4 Մարտի 1193 ի հասակի 57 ամաց. իւր ժառանգաց չթողեց մի պալատ. մի պարտէզ եւ անշարժ կայք անդամ. բոլոր իւր հարստութիւնն բաղկանում էր 47 կտոր արծաթից եւ մի կտոր ոսկուց: Մահուան անկողնոյ վերայ ասաց իւր պաշտօնէից մեկնի. «վեր առ այդ զգեստդ եւ ցոյց տալով հասարակութեան յայտնէ, թէ այս միայն կարէ տանել ընդ իւր արեւելքի տէրն»: Հրաժարական ողջոյն տալով իւր Ա.ֆդալ որդուն, արտաբերեց այս խօսքս. «Երկնչիր Գերադոյն էակից եւ հնազանդիր նորա պատուի-

(*) Որդի Ֆրէտերիկոսի Ա. որ լինելով նաեւ թագաւոր Հռոմայեցւոց, զկնի մահուան հօր իւրոյ պսակուեց կայսր 14 Ապրիլի 1191 ամի ի Կղեմտէն պապէ: Ջունենալով իւր հօր առաքինական բարեմասնութիւնքն, մի այնպիսի անզգութիւն գործեց, որ նախատինք բերաւ իւր անուան եւ պատուին. տիրապետելով Սիկիլիոյ նենգապատիր խաբէութեամբ ապահովցուաւ թանկրէդի կինն եւ որդիքն, որք էին ժառանգ Սիկիլիոյ, գալ առ ինքն առանց երկնչելոյ. բայց ապա զրպարտելով Թագուհին փակեց զնա ի բսնոի, այրեց կենդանւոյն պետութեան աւագանիքն, կախեց կամ ողջ ողջ թաղեց հոգեւորականքն եւ Թագուհւոյ մերձաւորքն, բացաւ Թանկրէդի եւ նորա որդւոյ բօժէրի դամբարանքն եւ յափշտակեց նոցա զլխի թագըն պատճառելով թէ յափշտակիչք էին: Հենրիկոս ջանայր միշտ սիրապետել արեւելեան Հելլենական — կայսրութեան եւ միացնել արեւմտեան եւ արեւելեան եկեղեցիքըն, սակայն վաղամեռիկ լինելով յարդիւնս չհասեց իւր յատակագիծն: Մեռաւ ի Մէսին ի 28 Սեպտեմբերի 1197 ի հասակի 33 ամաց: Սա է Լեւոնի Կիլիկիոյ իշխանին Թագ յղօղն:

Տուց. Թադդ.

բանաց, զի նա արմատ է ամենայն բարութեանց եւ աղբիւր բարեբաստութեանց: Մի թափեր զարիւն ընդունայնաբար, քանզի հեղեալ արիւնն անքուն է, կը վերադառնայ քո գլխին: Հալատակացդ սիրոյն արժանացիր քո քաղցրութեամբ, զի Աստուած յանծնէ զնոսա քեզ իմ ծեռօք: Մի հարստահարեր որ եւ իցէ մարդը. մի ատեր ուսեր, քանզի մահն ամենեցուն մի առնէ: Եթէ բարկացուցել ես զԱստուած, դիմիր առ նա. զի ամենաողորմած է»:

Սալահատդին էր մի գործունեայ, արի եւ քաղաքագէտ իշխան, ընդունակ ամենաղնիւ զգացմանց. ծերբակալելով ի պատերազմի Հուգ ասպետը՝ 100,000 բիւզանդեան ոսկի պահանջեց փրկանաց գլխ: — «Իմ երկիրս եւ վիճակս բաւ չեն ժողովել այդ գումարդ» ասաց ասպետն: — Կը շնորհեմ մի տարի պայմանաժամ զտանելոյ զայն, ասաց սուլթանն, դիւրին է քեզ քանզի քոլոր արժանահաւատ անձինք կաճապարեն հասանել քո փրկութեան: — Տէր, կրկնեց Հուգ, անծանօթ է ինձ Քրիստոնէից մէջ քան զքեզ մի առատծեռն անձ, ներեցէք, որ նախ ծեռանէ խնդրեմ մի պարգեւ: Սալահատդին պարգեւեց անմիջապէս դումարի կէսն, Էմիրայք հետեւեցին նորա օրինակին եւ մի վայրկենում ժողովեցին 40,000 Բիւզանդեան ոսկի ի բաց առեալ փրկանաց գինն. ասպետն վերադարձաւ այդ աւելորդ դումարով: Թէ եւ անգէտ, Սալահատդին սիրէր զրական անձանց ընկերութիւնն. կրօնաւոր եւ կարի ուղղափառ լինելով՝ անապաշտութիւնն անծանօթ էր նմա. իւր բարքն մաքուր էր, կարօղանում էր զսպել իւր կիրքն: Քաղցր եւ մարդասէր, հաղուագիւտ էր նորա անաչառ եւ ոխակալ լինելն: Ա.ռ ի կատարելագործութիւն մի ազնիւ իշխանի, նորան միայն պակասէր քրիստոնէութիւնն:

Չկնի մահուան սուլթան Սալահատդինի՝ այն մեծ ինքնակալութիւնն բաժանուեց յինն անկախ պետութիւնս եւ եղեն Այուբեան հարստութիւնք յԵգիպտոս, ի Դամասկոս, ի Հալէպ եւ ի Միջագետս, որք մաքառէին միմեանց հետ կատաղութեամբ 1), ուստի Քրիստոնեայք պատեհ առիթ համարեցին յափշտակել սուրբ երկիրն անհաւատից ծեռքէն: Կղեստին Գ. պապն ազդ արաւ քրիստոնեայ թագաւորաց ծեռնարկել այդ տիրապետութեան. Հենրիկոս Գ. կայսրն, ըստ որում գժտութիւն ունէր ընդ Եկեղեցւոյ, կասեցնալով հաշտուիլ՝ հարկադրեց Գերմանացիքը կազմել մի խաչակրութիւն. Մայանսի, Կոլօյնի, Բրէմիոյ արքեպիսկոպոսունքն, յոլով եպիսկոպոսք, Մէրանիոյ, Բրաբանի եւ Աւստրիոյ դուքսն, Հենրիկոս Գուելֆ Հռենոսի պալատին կոմսն, Հերմանն Տուրինժի Լանդգրաւն խնչակրուեցան: Կայսրըն հայթայթեց ահագին դումարներ եւ Մայանսի արքեպիսկոպոս կոնրադը զօրաց ընդհանուր հրամանատար կարգեց. զօրքն երկու զնդի բաժանուեց, առաջինն ուղղուեց դէպ ի Կ. Պօլիս, իսկ երկրորդն ճանապարհորդելով Իտալիոյ միջով հասաւ 22 Սեպտ. 1194 յՍ.քեայ: Խաչակիրք կարծէին, որ իւրեանց գալուստն խիստ հաճելի պիտի լինէր Պաղեստինոքրիստոնէից, սակայն ի դերեւ ելաւ իւրեանց յոյսն: Հենրիկոս զը Շամբայն, որ առանց կրելոյ թագաւորական տիտղոսն, կառավարէր անուամբ եւ եթ կոչեցեալ Երուսաղէմայ թագաւորութիւնն, ցանկայր մընալ ի խաղաղութեան առիւծասիրտ Ռիշարի զինադադրի միջոցաւ, զոր Սալահատդինի ժառանգքն նորոգել էին: Սակայն Գերմանացիք մերժելով հնազանդել մի հրամանի, զոր չէր եղած իւրեանց աղղի իշխանաց ծեռօք, անջատուեցան տաճարականն եւ ասպնջական ասպետներից, որք բարեկամութեամբ կվարուէին անհաւատից հետ: Վերջապէս Բրաբան զքսի եղբայրն առանց սպասելոյ մնացորդ խաչակրաց, յարձակեց Մուսուլմանաց վերայ եւ այդ անդէմ ծեռնարկութեամբ պատճառ եղեւ Յոպպէի կորստեան: Հենրիկոս Շամպայնեան աճապարում իր հասանել յօգնութիւն այդ քաղաքի, երբ իւր տաճնեստանից ի վայր անկանելով կոտրեց պարանոցն. յայնժամ Գաղղիացի խաչակիրք, որք մնացեալ էին ի Պաղեստին. մեկնեցան այդ երկրէն:

Ա.ժբէ Ռ. Լ—էնան Երէոպատանէրոջ Նոթառ

ի 1197:

(1) Մէլիք Ադիլ անդրանիկ որդի Սալահատդինի սահմանեց հրաժարիլ. Մէլիք Էզիզ կրասերն տիրեց յԵգիպտոս. Մէլիք-Ադդահէր կրասերազգին ունեցաւ դՀալէպ. Մէլիք Ադըլ, եղբայր Սալահդինի, Դամասկոսն եւ Միջագետքն եւլն: Երուսաղէմ համարեալ էր մասն Դամասկոսի իշխանութեանն, բայց բազմիցս փոխեց իւր իշխանքն:

այս ինքն Իզաբէլի դուստր Ա.մօրի Ա. այն որ առաջ ամուսնացել էր Հումֆրուայի եւ կոնրադ Մօնտֆէրատ-յի հետ:

Գերմանացի խաչակիրք ընդ առաջնորդութեամբ Հենրիկոս Բրաբանի դըսին եւ Կոնրադի սկսեցին վալրամի ծեռնարկած պատերազմն. առին զՊէրութ Ա.մօրի Բ. թագադրուեց եւ պահուեց: Սիդոնի առ-ընթեր յաղթեցին Սալահադինի եղբօր, մինչդեռ Բօհ-մոնդ Գ. Անտիոքայ իշխանն առնելով զձէպլա եւ Լա-ոդիկէ միացոյց իւր իշխանութեան հետ: Խաչակիրք պաշարեցին ապա Տարոնա ամրոցն զրեթէ երկու ա-միս. բայց իւրեանց մէջ ծագած երկպառակութեան եւ Հենրիկոս Դ-ի մահուան գուժի պատճառաւ՝ հար-կադրուեցան վերադառնալ յԵրուսա: Ուղեւորու-թեան պատրաստութեանց մէջ Ֆրէտէրիկ Ա.ստրիոյ դուքսն, մականուանեալ Ուղղափառ, զրաւեցաւ ի կե-նաց ի հասակի 24 ամաց ի 16 ապրիլի 1198: Գեր-մանացի իշխանաց զնալէն ղկինն Ա.մօրի Բ. Նորոգեց Ա.յուբեան իշխանաց հետ զինադուլն 3 տարի եւ կէս ժամանակաւ, սկսեալ ի 21 Յունիսի 1198:

Հազիւ Իննոսան Գ. 1) մեծ քահանայապետն հա-մարծել էր առաքելական գահն, որ մտածեց կազմել մի չորրորդ խաչակրութիւն Երուսաղէմայ Թագաւորու-թիւնը վերականգնելոյ համար. սակայն պարագայք Թոյլ չետուն կատարումը, վասն զի Ա.նգղիոյ եւ Գաղղիոյ Թագաւորք միմեանց հետ մաքառելով եւ կայսերք իւ-րեանց Իտալիոյ գործերով զբաղուած լինելով՝ անհը-նար էր, որ պետական մի ծանրագոյն ուղեւորութիւն ցանկանային, ուրեմն հարկաւոր էր որ նախանձ-մունքնին հնարէր մի գործիք վառելու ժողովրդեան եռանդն. այդ գործիքդ էր Ֆուլք ժողովրդապետն, որ

(1) Այս պապս, որ ընտրուեց քահանայապետ ի 1198 ամի, Հռովմէական եկեղեցւոյ ամենաերեւելի պապերի միանն է. իւր սկզբմունքն նոյն լինելով ընդ Գրիգոր Է.ի, առաւել քան զնա նկրտեց համաշխարհական տիրապետութեան ծգտման. հաստատա-միտ էր նա, ճարտարախօս եւ անվեհեր, մինչ այն աստիճան, որ կայսեր իրաւունքն, որ ունէր Հռովմայ վերայ, ոչնչացրաւ: Իննոսան քահանդեց Ֆիլիք — Օգոստոս Գաղղիոյ սրբոյն, վասն զի նա արծակելով Տանիմարքի թագաւորի դուստրն, ամուսնացել էր Ա-նէս Մերանիոյ դրսի դստեր հետ: Նոյնպէս նզովից եւ Լէոնի (Սալամիա) թագաւոր Ալֆոնս Թ. ը: Մեռաւ 1216-ին:

(2) Հեղինակն ակնարկում է Լատինացւոց Կ. Պոլսոյ տիրա-պետութեան, որ այդ չորրորդ խաչակրութեան միջոցաւ եղաւ. Նա զայդ չէ յիշում աստ, վասն զի պատմել է իւր գրքի ապեւելեան —Բիւզանդեան կայսրութեան պատմութեան մասի մէջ:

Թարգ. Թարգ.

այն դարու յոռութեանց վերայ քարոզելով՝ մի մեծ սրբութեան համբաւ էր վաստակել: Պապն լսելով նո-րա քարոզի հրաշագործ զօրութիւնն, յանձնեց քարո-զել մի խաչակրութիւն: Ֆուլք ներկայանալով մի պի-նախաղութեան մէջ, որոյ յարդարակն էր Շամպայնի դուքսն, այնպիսի ազդու եւ զրդիչ կերպիւ ճառեց, որ առ յապայն բազմաթիւ ասպետք եւ կոմսք առին ըզ-խաչ, որոց օրինակին հետեւելով եւ այլ իշխանք, ի թիւս որոց Շամպայնի մարաջախտ Ժօֆրուա Վիլ՝ այս խաչակրութեան պատմիչն, ընկերացան նոցա հետ. միայն բազումք ի նոցանէ այն մտքով խաչակրուե-ցան, որ յապահովի մնան Ֆիլիք — Օգոստոսի վրէժ-խնդրութիւնից, քանզի նորա ընդդէմ ծառայել էին Ռիչար Առիւծասրտին:

Այս չորրորդ խաչակրութիւնս կատարուեց. սա է ամենաերեւելիներից միանն իւր արտադրած արդեանց մասին, բայց արդէն յայտնի է՝ Թէ հրպիսի առիթք իւր սկզբնական նպատակից փոխելով դէպ յայլուր ուղղեցին 2):

Խաչակրութիւն մանկանց ի 1212:

Խաչակրաց առաջին դիտաւորութիւնն բոլորովին մոռացման էին տուել, բայց Իննոսան Գ. միշտ առա-ջի աչաց ունէր այդ եւ իւր միակ նպատակն էր սուրբ երկրի ազատութիւնն: Իւր եւ կարդինալաց եկամտից տասանորդն եւ հոգեւորականաց քառասներորդն զո-հել էր վասն իրագործման այդ նպատակի, բայց յա-ջողութիւնն չը համապատասխանեց իւր ցանկից. ի Գերմանիա տիրեալ պատերազմն, ի Գաղղիա եւ յԱ.նգղիա եղեալ պատերազմքն, Ալբիժացւոց ունեցած կռիւն ընդ Եկեղեցւոյ՝ արգելք եւ խոչընդոտք եղեն արեւելեան ուղեւորութեան: Երկոտասաներորդ դա-րու մարդկանց յախուռն եռանդն խաչակրութեանց առիթ յայտնուեց միայն մի դրեթէ անհաւատալի անմտութեան ծեռնարկութեան մէջ, որ 1212 ամն հռչակաւոր կացուցանէ: Մի բոյլ մանկունք խաչակ-րուեցան ի Գերմանիա, ի Գաղղիա զնալ եւ տիրա-պետել ղԵրուսաղէմ. այս նորատի փանատիկականաց բազմաթիւ հրոսակքն անցան Ալպեան լերինքն եւ հասան յԻտալիա, ուր վաստակը եւ Թշուառութիւնն գահավիժեցին նոցա նախ քան զժամանակ ի դերեզ-մանն, մօտ 30,000 այս անմեղներից Մարսիլիոյ ծա-

նապարին բռնեցին եւ եղեն նախճիրք զերեվաճառ վաճառականաց, որք նոցա խոստանելով մի ծրի ճանապարհորդութիւն ի Պաղեստին, վաճառեցին Ափրիկիոյ Արաբացւոց:

(Շարունակելի):

Թ. Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ԵԿԵՂԵՑԻՔ
Վ. ԸՂԸՐՇԱՑԱՑ ՀԱՅՈՑ

(Շարունակութիւն):

Տաճարի հարաւային խորանի դռնէն կմտնեն երկու խորանը ևս մէջէմէջ դրռներով:

Հիւսիսային և արևելեան կողմի խորանները յարդարեց պահարան եկեղեցական բոլոր թանկագին զարդուց և մասանց սրբոց՝ իբրև թանգարան հնութեանց՝ զեղեցիկ դարակներով. որոց յառաջնում զետղեց զգեստք, արծաթեղէն սպասք և հնութիւնք. երկրորդի մէջ բոլոր սրբութիւնք. իսկ հարաւային խորանը օրհնելով անուամբ սրբոյն Գէորգայ զօրավարի, մեծամեծ դարակներով զարդարեց՝ առ ձեռն գործադրելի սպասուց համար պահարան:

Այս երիք խորանաց կիսագմբէթներու գլուխը ոսկեզօծ մեծ խաչերով զարդարեց, և կապարով ծածկեց:

Եկեղեցւոյ մէջ հին խորաններուն դրռնները բարձրացրուց և կամարակապ բարաւորեց. առաջնի դասերը որպէս և առեանը Աստուածածնի սեղանոյ յառաջ՝ թափուածու և ծաղկաձև երկաթի վանդակներով պատեց. Իջման տեղի սեղանոյ առեանը ևս արձակ լինելու համար հանդիսաւոր օրերում Եկեղեցական ուխտը թափօր կանգնելու, Եղիազար Կաթուղիկոսի դրած երկու ստուար քարերը վերցնել տուաւ:

Իսկ Եկեղեցին զարդարեց ջահաձև սպակեայ գեղեցիկ կանթեղներով, որպես առաջի դասը, նոյնպէս և Իջման տեղւոյ Կաթուղիկէի շրջապատը. ըստ որոյ և Եկեղեցւոյ միջին վայելչութիւնը համակերպելու՝ ըստ մեծ վայելչութեան անուանն, Եւագ խորանի և սրբոյն Յակոբեանոսի և սուրբ Յովհաննու սեղանների համար թանկագին վարագոյրներ բերել տուաւ,— նուէրք Տփղիսեցի բարեպաշտից.—կարմիր մախմուր աւագ սեղանին, և դեղին ծաղկեայ աթլաս երկու սեղաններին:

Տաճարի այս շինութեանց հետ Կաթուղիկոսարանը ևս զարդարեց Վահափառ Հայրապետը վայելուչ շէնքերով. Կաթուղիկոսարանի մէջ դուռը՝ որ իւր նեղ և անձուկ փոքրկութեամբ անվայել էր Կաթուղիկոսական տան, փակեց զայն, և նորանից ինն կանգուն դէպ ի հիւսիս Կաթուղիկոսարանի ներքնայարկը բանալով, սենեկաց միջոցը կարճց և մեծ ու կամարայարկ դուռն կանգնեց սրբատաշ քարով. որոյ ներքին կէսը դէպ ի վեհարան՝ երկու կողմից քարէ սանդուղներով բարձրացան. և այս դրան ներսի կամարայարկի վրայ՝ տախտակամած և դեղագործեալ նոր դուռն կանգնեց դէպ ի Վեհարան շրջափակ ապակի լուսամուտներով, գրեթէ Կաթուղիկոսարանի կիսաբաժնի մէջ, այն տեղ՝ ուր Յովհաննէս Կաթուղիկոսն ևս դուռն էր թողել, բայց Ներսէս Կաթուղիկոսը փակեց:

Իսկ դրսեան մուտքը՝ որ բոլորովին անյարմար էր Ընդոծոյս մեծ վայելչութեան, և սահեաց ճանապարհով Վեհարանի

միջով կելանէին ի վեր այգեկութք, գեղեցիկ ևս յարդարել տուաւ։

Գրատան դուռը՝ որ կբացուէր արևմտից գանձարանի կարգն եղած ներքնայարկ սենեակների տանեաց վրայ, արևմտեան լայնութեան հաւասար շինել տուաւ տախտակամած մեծ սրահ գրատան դուռը մէջ առնելով. զարդարեց նստարանօք և յարդարեց զայն ընթերցարան միաբանից. որոյ շէնքը կցելով ի հարաւոյ Վ. Հովհաննի հետ, ներքուստ մինչ ի վեր կանգնեց սանդուխք, ճախարակաւոր և դրան առաջի պատշգամբ՝ գոյնզգոյն ներկով գեղագործած՝ դրան բարձրութիանը հաւասար մեծ մեծ լուսամուտներով զարդարեց։

Վազաբապատ ասացեալ հիւրանոցը, որ խախտացած էր վաղուց, բոլորը նորոգել տուաւ և շրջապատ տախտակամած ձեմելիքը սենեկաց յառաջ հանդերձ սանդուղներով նոր ի նորոյ շինեց։

Ընթացս մեծակառոյց և հոյակապ Հովհաննէս վարդապետ ևս նոյն թուականէն 1869, ըստ կասս շինել Եկեղեցւոյ խորանաց հետ. որոյ հիմնարկութեան հանդէսը նոյն տարւոյ մայիսի ամսին Եկեղեցական օրհնութեամբ կատարեց. և երկու տարւոմ պատից շինութիւնը աւարտեց՝ երեսներն կոփածոյ քարով, որու ներքին փայտեղէն և ատաղձագործ բովանդակ պարագայքն ու գեղագործութիւնքը չորս տարւոյ մէջտեղ լրացան։

Ի մեծ վայելչութիւն նորակառոյց Հովհաննէս վարդապետին որպէս և գիւղին առ հասարակ, Ընթացս պարսպի հիւսիսային դրան առաջի երկայն հրապարակն ընդ մէջ պարսպին և գիղջ, ուր որ յառաջն գիւղայցոց նախիրը կժողովէր առաւօտ և երեկոյ, և ոչ սակաւ օդոյ անմաքրութիւն կպատճառէր, յարդարել տուաւ հասարակաց պարտէզ (բուլվար) դրան յառաջէն պարսպի երկայնութեամբ ի ծայրէ ի ծայր՝ մինչև Հովհաննէս վարդապետի յառաջը. երիք հարիւր քսան և չորս կանգուն երկայնութեամբ և իննսուն կանգուն լայնութեամբ. ուր վայրի և ընտանի նորատունկ ծառեր կարգ ըստ կարգ անկելով, բոլոր շրջապատը դեղագործեալ սիւնակներով ցանկապատեց. որ այժմ ոչ սակաւ գիւղի անշ քութեանը շուք և քաղաքի կերպարանք կտայ ի մեծ ղուարճութիւն թէ ծառայողաց քաղաքական կառավարութեան որ ի Վաղարշապատ ամառ ժամանակին, և թէ բոլոր գիւղացւոց զբօսանք՝ եկին և օտարին։

Նշակի եղերքը՝ որ ձեմելու համար երկու կարգ շրջապատ փարշած էր կոփածոյ քարով, մի կարգ ևս աւելցած էր Սատթէոս Աղթուղիկոսի օրով. այս եղերաց ուղղութեամբ երեք կարգ ծառերով շրջապատը զարդարեց, որ ամառը մեծ վայելչութիւն կտայ շակին, և ձեմողաց ոչ սակաւ զբօսանք։

Ընտառի արևմտեան կողմէն կից նորան նոյն երկարութեամբ և լայնութեամբ նոր անտառ ձգեց, բոլոր լեռնային և վայրի նորատունկ ծառերով. որոց կէս մասին ծառերը վերուստ ի վայր ձգուած են և հասունացած. ուստի բոլոր անտառը ապահով պահպանելու համար՝ շրջապատ պարսպեց։

Վաղարշապատայ Աղթուղիկէ Եկեղեցւոյ սատրապրութիւնը ամբողջացնելու համար՝ հարկ էր առնել և նորա տեղապրութիւնը ըստ կարգի. ըստ որում երեքին նորաշէն խորանները միացած են

տաճարի հետ. բայց ըստ որում յիշեալ խորանաց շինութիւնքն արդէն ստորագրեցինք, ասելոյդ կհամարիմք կարդալ Եկեղեցւոյ տեղագրութիւնն էլ, թողլով ընթերցողաց տեսանել զայն յԱռաքել պատմագիրն և Հահնթ. Յովհաննէս եպիսկոպոսի Կաթուղիկէ Եկեղեցւոյ Ատոռագրութեան մէջ:

Ե. Եկեղեցի սրբոյն Հռիփսիմեայ.

Վաղարշապատայ երկրորդ Եկեղեցին զոր շինեց սուրբն Գրիգոր Լուսաւորիչն մեր սրբոյն Հռիփսիմեայ կուսի գերեզմանի վրայ՝ զոր փորեց սուրբն Տրդատ, նոյն քաղաքի հիւսիսային արևելեան կողմն է, քառորդ ժամու հեռաւորութեամբ, այն հնձանատեղւոյ վրայ, ուր որ պատսպարուած էին սուրբ Կուսանքն, և ուր նահատակեց սուրբ Հռիփսիմէ իւր ընկերներով, և վանքն կառուցաւ նորա իսկ անուամբ ի 301 թուականին:

Մատուռն գերեզմանին Հռիփսիմեայ, որոյ մէջ դրուած է և արկղն նշխարաց՝ է ուղղակի սեղանի բեմի տակին, փոքրիկ կամարակապ՝ երկայն՝ մարգաչափ բարձրութեամբ, որոյ մուտքն կբացուի հիւսիսային կողման խորանի մէջ երկաթ աստիճանաւ դէպ ի ներս:

Գրիգոր Լուսաւորչի շինած Եկեղեցին Հռիփսիմէի գերեզմանի վրայ, թէ ինչ նիւթից էր կամ ինչ ձև, Ագաթանգեղոս չի յիշատակեր. այլ միայն սուրբ կուսի դերեզմանի համար կգրէ թէ՝ նա ինքն Տրդատ փորեց սրբոց գերեզմանատեղը արկղոյց չափով, զոր սուրբն Գրիգոր տուաւ նորան, որ նոցա մէջ շինեց նոցա հանգստեան մարտիրոսական յարկը (Ագաթան. եր. 287). միայն յետագայ պատմիչք կաւանդեն տաճարի շինութիւնը ի սուրբ Լուսաւորչէն: Ինչպէս յառաջ կը բերինք:

Լուսաւորչու շինած սրբոյն Հռիփսիմեայ տաճար Հապհոյ զօրքը կործանեց 380 տրկչական թուին. զոր ապա տասն և հինգ տարիէն նորոգեց, և յանգէտս բանալով սրբոց տապանատեղին, տեսաւ սուրբ Լուսաւորչի կնիքը սուրբ կուսի տապանի վրայ. յորմէ իւր փափաքն առնելով, առանց բանալոյ արկղն, ինքն ևս կնքեց:

Ընդ երկրորդ շինութեան վայ երբ որ անցել էր արդէն երկու հարիւր քսան երիք տարի, Սոմիտաս Կաթուղիկոս՝ որ նախ փակակալ էր Հռիփսիմեայ վանից, ինչպէս պատմիչք կվկայեն, իւր Կաթուղիկոսութեան իսկ առաջին տարում 618 թուին՝ Սահակ Հայրապետի ժամանակէն շինուած ցած ու մթին շինուածքը քակելով, պայծառ և վայելուչ ևս շինեց Հռիփսիմեայ կուսի Եկեղեցին կոփածոյ քարով, լայնանիստ կամարիկիւ՝ շրջապատ պատշգամով ի ներքուստ. և արտաքուստ շրջանակը և լուսամուտաց կիսաբոլորակ կամարները բոլոր փորուածոյ ղբրուագներով, և տանեաց վրայ Կաթուղիկէի չորս կողմը չորս բոլորակ սեներակներ, որոյ դուռը կբացուի պատշգամբի մէջէն:

Սոմիտաս Կաթուղիկոսի այս շինութեան համար կվկայէ նորա ժամանակակից Սեբէոս Եպիսկոպոս պատմիչ նոյն եօթներորդ դարում, այսպէս:

«Յամի ԻԲ. թագաւորութեան Ըպրսոյ մէկ հոսրովու քակեաց Կաթուղիկոսն

Կոմիտաս զմաուռս սրբոյն Հռիփսիմեայ ի Վաղարշապատ քաղաքի. զի կարի ցաւ և մեծին էր շինուածն. զոր շինեալ էր սրբոյն Սահակայ Հայրապետի Հայոց Կաթուղիկոսի որդւոյն սրբոյն Ներսիսի,,:

Այս շինութեան ժամանակ ևս սուրբ Լուսին դադաղը հանելով Կոմիտաս, և չհամարձակելով բանալ, որու վրայ տեսաւ Լուսաւորչի և մեծին Սահակայ կնիքը, ինքն ևս կնքեց. և այնպէս բացօթեայ թող տալով դադաղը յուխտ և ի համբոյր ժողովրդոց, Հկեղեցու շինութիւնը լաւ յաջողեալն ետքը՝ արկղը ամփոփեց վերստին իւր կայանին մէջ:

Կոմիտաս Կաթուղիկոսի Հռիփսիմեայ վանքի այս շինութիւնը կյիշատակեն յուտպայ պատմիչք ևս՝ ինչպէս Յովհաննէս Կաթուղիկոս յիննեերորդ դարուն. Մաթիանոս Ասողնիկ տասներորդին մէջ. բայց Կոմիտասայ ժամանակակից պատմագրի վկայութիւնը բաւական համարեցինք վասն հաստատութեան միայն յաւաջ բերել, մեր ստորագրութիւնը աւելորդ ալողը չէ երկարացնելու համար: Միայն յիշեալ Հայրապետի շինութեան արձանագիրը ստ կօրինակինք, որ կայ յիշեալ Հկեղեցւոյ արևմտեան դրան կամարէն վեր որմի մէջ, ըստ այմ:

,,Հս Կոմիտաս եկեղեցապահ սրբոյ Հռիփսիմէի, կարգեցայ յԱթոռ սրբոյն Գրիգորի, և շինեցի զաաճար սրբոյ վկայիցս Քրիստոսի,,:

Հռիփսիմեայ վանքի այս շինութիւնը Կոմիտաս Կաթուղիկոսէն՝ յընթացս տասըն դարուց՝ 618—1653՝ ժամանակի աշխարհքի բռնութեանց դէմ դրեթէ մաքառելով և անհնարին փոփոխութիւններ կրելով՝ կէս մի ամայութեամբ՝ կէս մի աւերանքով, անցուցել էր արդէն այդ դարաւոր ժամանակները. երբ որ Պարսից և Օսմանցւոց փոխադարձ պատերազմաց ներեան փոքր մի խաղաղութիւն դանելով Հայաստան՝ Ազգիս Կաթողիկոսութիւնը վերստին սկսան նորոգել Վաղարշապատայ կաթուղիկէն՝ և վերստին տարապիր ու հալածուած հոգևոր միաբանութիւնը ժողովել այդ Աստուածահաճոյ պատսպարանների մէջ, ի գուրթ շարժեցաւ Փիլիպպոս Կաթուղիկոսը Կաթուղիկոսական տան շինութեանց հետ՝ և Հռիփսիմեայ վանքի բոլոր աւերանքը շինել, և եկեղեցւոյ քայքայեալ որմերը, տանիքը և այլն ամենայն սրբատաշ քարով նորոգել. որոնք գրեթէ բոլորն ի հիմանց նոր ի նորոյ շինեց միաբանք կարգելով անդ, ի 1653 թուին. որ յառաջ անմարդաբնակ և ամայի էր. որոյ և արձանագիրն Կոմիտաս Կաթուղիկոսի արձանագրի ներքև կանոնի ըստ այմ:

,,Ի թուին ՌՃՈՒ (1653) Քրիստոսի ծառայ Փիլիպպոս Կաթուղիկոս ամենայն Հայոց վերստին նորոգեցի զեկեղեցիս սրբոց կուսանացն Հռիփսիմեայ և Գայիանեայ,,:

Հղեռազար Կաթուղիկոսն ևս՝ որ շատ եկեղեցիք շինեց, որոց համար Սիմէոն Կաթուղիկոս կվկայէ, Հռիփսիմէի վանքի մէջն ևս բաւական նորոգութիւններ արաւ:

Սիմէոն Կաթուղիկոսի շինութեանց ժամանակ ի Կաթուղիկէն, նորա սպասաւորը Մկրտիչ եպիսկոպոսը իւր արդեամբք և ի յիշատակ Հռիփսիմեայ վանաց քաւաղուսի պարիսպը շինեց չորս բրգով. հիւ-

սիսային կողմը կանգնելով կամարակապ մեծ դուռն. որու արձանագիրն դրուած է դրան կամարի մէջ, ի ՈՒՄԻՆ, 1776· թուին:

Իսկ 1790 թուականին՝ Ղուկաս Կաթուղիկոսն Փիլիպպոսի շինած նկեղեցւոյ փոքրիկ գաւթի վրայ կառուցանել տուաւ վայելուչ կաթուղիկէ սրբատաշ քարով չորս սեան վրայ, Ջուղայեցի Խաչիկ իշխանի արդեամբք, որ կընակէր Հնդկաստանի Կալկաթայ քաղաքը. և սորա շինուածեան արձանագիրն է զանգակատան մէջ՝ դրան հիւսիսային կողմը, նոյն թուականում:

Տաճարի շինքը դրսի կողմէն քառակուսի է՝ բայց ներքուստ բոլորշի. ըստ որում որմասիւնները հիւսիս և հարաւային ոլմբէն յառաջ գալով՝ բոլորշի ձև են կացուցել ներքուստ՝ որոց վրայ է լայնանիստ կաթուղիկէն. ձագարած արտաքուստ առնեաց վրայ, միջի կողմը ունի կաթուղիկէն շրջապատ պատշգամբ. որոց մէջ կբացուի կաթուղիկէի չորս կողմը շինած առնեաց վրայ բրգաձև սեղնկաց դռնները, որով և չորս լուսամուտ միայն ունի լայնանիստ կաթուղիկէն:

Ունի մի սեղան պատարագի և չորս խորան առաջին և յետին դասերի կողմնական անկիւններում, և այն արժանայիշատակ կաթուղիկոսաց դերեզմանները կան տաճարի մէջ, որոնք սկսած Կոմիտաս կաթուղիկոսէն՝ նորոգել են Հռիփսիմէի վանքը կամ շինուածներ արել. բեմի առաջին Կոմիտաս կաթուղիկոսի տապանն է. որոյ տապանաքարն հաւասար է սալայատակի հետ, որ ի սկզբանն այնպէս վայելուչ կոփածոյ քարով կանգնեց այս տաճարը հօրեղբօրդ դարու ճարտարութեամբ:

Փիլիպպոս կաթուղիկոսի դամբարանը աջակողմեան դասի հիւսիսակողմն է բարձր տապանաքարով, որ տաճարի վերջին վայելչացնողն է և շինացնողը դարաւոր աշխատութենէ:

Իսկ արևմտեան դրան առաջին արտաքուստ զանգակատան ներքև երկուց կաթուղիկոսաց դամբարանները կան՝ Ղարապետ և Ըստուածատուր կաթուղիկոսաց: Պարսպի միջին ևս կան քանի մի շերիմներ. որոց մէջ նշանաւորն է Լէհացի Յակոբ վանական վարդապետինն. որ երևելի է իբր պատկերահանութեամբ և գրաւոր վաստակով:

Ի մէկն կաթուղիկոսի օրէն սկսեալ, երբ որ պարիսպը շինուեց, բովանդակ պարսից իշխանութեան ժամանակ շարունակ վանահայր կնատէր Հռիփսիմէի վանքը, օրական հաց և կերակուր կառնէին Ընթռէս. պարսից վերջին բռնաւորութեանց երեսէն սոխպուած ժողովուրդը շատ տեղերէ իրենց որդիքը ապահովելով՝ յԱջմիածին իբրև տեղի ապաւինի՝ կատարին ի հոգևորականութիւն. մինչև վաթսուն աշակերտաց Ընթռոց կառավարչէք կպատասպարէին Հռիփսիմէի վանքի մէջ, նոցա սնունդ և հանդերձ հոգալով Ընթռոց:

(Շարունակելի):

ԱԲԵԼ. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱԽԱՀԱՒԻՂ ՕԹԵՐԵՒԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՐՁ ԳԻՏԵԼԻՕՔ ԵՒ ԾԱՆՕԹՈՒԹԵԱՄԲՔ,

Ցառաջաբան.

Իւրաքանչիւր հեղինակ կամ Թարգմանիչ իր աշխատասիրութեանը նախաբան մը կկազմէ ցոյց տալու աշխատութեան պատճառը՝ առաւելութիւնը եւ օգտակարութիւնը: Այսպէս եւ մեք այս մեր աշխատութեան մասին քանի մը խօսք ըսելու չեմք դանդաղեր:

Մարդը նիւթական աշխարհիս մէջ ծնանելուն պէս երկինքն ու երկիր իր աչաց առչեւ ահագին եւ հրաշակերտ տեսարան մը կբանան, հետզհետէ տարիքն առնելով հետաքրքրութիւնը այնպէս կզրգռի, որ զբաղեցէ ակամայօրէն տեսած իրերուն եւ օդային բնական երեւոյթներուն պատճառները փնտռելու կըսիրուի: Երբ տղայութեան ժամանակը կը թռչի իբրեւ ստուեր, այնմհետեւ կատարելութեան կէտը հասնելուն պէս՝ իսկոյն հարիւրաւոր երեւոյթներ ըզգայութիւններ կզրաւեն ու կյափշտակեն զինքը, ինչպէս չորս կողմ եղած մարմնոց ծաւերը, ծանրութիւնը, ջրոյն շարժմունքը, ամպերուն ընթացքը, երկնից սքանչելի աստեղազարդ կամարը եւ այլն եւ այլն, յորոց կհարկադրուիմք ըսելու թէ մնդրիկ ի ծնէ բըռնադէտ են: Բայց ինչ օգուտ, երբ որ շատերը այս իրենց բնականը անմշակ, անխնամ կթողուն, որով հետաքրքրութիւնին կդադարի, եւ քիչ ժամանակէն եւրը երեւոյթներն եւս տեսանելու լինին, միտ չեն դներ ոչ անոնց պատճառին, եւ ոչ օրէնքին: Բայց վերջապէս կիմանան, որ իրենց կարողութենէն վեր է եղեր անմիջնորդական եղանակաւ ամեն տեսածներու պատճառներն ու ընդհանուր օրէնքներն ճանչնալ: Այսոր աւելի կրնան համոզուիլ, թէ որ չափաւոս լինելով առաջուան ժամանակներուն գիտութեան մէջ մարդկային տղայութեան մոլորութիւններուն վերայ տեղեկութիւն մ' ունենան, զուցէ անոր սյլանդակ ու մտացածին կարծեացն ու ենթադրութեանցը շատերուն վերայ՝ առանց բնագէտ եւս լինելու՝ ծիծաղին: Բայց այս եւս ստոյգ է, որ ամեն ժամանակ, ամեն դար իր գիտութիւնն ու իր մոլորութիւնը ունի, մոլորութիւնը՝ տգէտներուն եւ անկիրթներուն քով, իսկ գիտութիւնը՝ գիտնոց ու կրթելոց քով, կըսէ բնագէտ մը իր ներածութեան մէջ: Երեւոյթներ յառաջ բերել՝ բնութեան գործն է, երեւոյթներուն քննութիւնը՝ իմացականութեան: Բնութեան աջակից է ժամանակը, որոյ բազմադիմի յեղափոխութեանցը շրջանակին վերայ դրոշմուած դէպքերը մէյմէկ անընպատ աղբիւր են քննող մտաց համար՝ որ միշտ պատճառանաց եւ հետեւութեանց հետամուտ է: Զեմք ուզեր ի քննութիւն մտնել հին դարու մէջ այս երեւոյթներուն վերայ շատերուն ունեցած կարծեաց, այլ կըսեմք, որ այս երեւոյթները սաստանայական կամ բնութենէ վեր բաներ կկարծէին շատերը այլ եւ այլ հետեւութիւններ մակարերելով եւ ծուռ մեկնութիւն տալով: Իսկ այժմեան դարս գիտութեան տիտղոսը ծեռքը առած անխոնջ աշխատութեամբ հերքեց այն խեղաթիւր կարծիքները եւ ըմբռնումները, որոնցմով տգէտը նշանագէտ կերեւէր շատերուն առչեւ:

Բնական երեւոյթներուն մէկ մեծ մասը պարունակողն եւս օդն լինելով, որոյ մէջ պատահած երեւոյթները ամեն օր աչքերուս առչեւ են, ինչպէս հով, անձրեւ, ձիւն, կարկուտ, կայծակ, ծիրանի գօտի եւ ուրիշ երեւոյթներ, որոնց ինչէն յառաջ գալը, ինչպէս լինելը, ինչ օրէնքով լինելը շատ անգամ իրարու կհարցնեմք, բայց կամ մտացածին մեկնութիւներով գոհ կլինիմք, եւ կամ ամենեւին մեկնութիւն չեմք գտներ: Ահա այս կարեւոր հարցը առնելով մեզ ստիպուեցանք այս նախաշաւիղ օդերեւութաբանութեան փոքրիկ աշխատասիրութիւնս հրատարակել: Ապրդ՝ մեր այս փոքրիկ գրքոյկը չորս գլխաւոր մասանց բաժանեցինք. առաջի գլխոյն մէջ օդեղէն երեւոյթներն գրինք հանդերձ գիտելեօք, եւ ըստ այժմեան բնագիտաց մեկնութիւններով. երկրորդ գլխոյն մէջ ջրեղէն երեւոյթները, երրորդին մէջ՝ լուսեղէն երեւոյթները, չորրորդ գլխոյն մէջ՝ յատկուած արտաքոյ կարգի մէտէօրէից երեւոյթներն:

Այս փոքրիկ գրքոյկիս համառօտ պարունակութիւնը ցոյց տալէն ետքը կխոստովանիմք հրապարակաւ, որ այս մեր աշխատութիւնը նոր հեղինակութիւն չէ, եւ իրրեւ հեղինակ այս երեւոյթներուն մեկնութեան հանդէս ելլելու եւս յանդգնութիւն չունիմք, այլ այս նիւթիս վերայ հրատարակուած զանա-

զան լրագիրներու եւ հեղինակութեանց խմբագրութիւն մի է: Բայց տեղ տեղ մեր կողմանէ դիտելիքներ եւ ծանօթութիւններ եւս աւելցուցինք: Այս հրապարակական խոստովանութեան նպատակը այն է, որ բանասիրաց դասը զմեզ չդատապարտէ, իբրեւ այլոց գրական աշխատութիւնը մեզ սեպհականող:

Ուստի կյուսամք որ այս մեր առաջին դուզնաքեայ հրատարակութիւնը ընդունելութիւն գտնէ սիրելի Ա.զգիս այն մասին մէջ, որոնք անտեղեակ են նորա մէջ քացատրուած երեւութից ինչէն յառաջ գալուն. եթէ ընթերցասիրողը օգուտ քաղելու կամ բան մը սովրելու լինի, շնորհակալութիւնքն կվերաբերին այն հեղինակներուն, որոնք ցօղական քրտինքներով, անխոնջ աշխատութեամբ, զանազան փորձերով գտան այս բնական երեւութից պատճառներ եւ օրէնքները. միայն մեզ կմնայ այս խրախոյսը, որ ուրիշ ուսումնական աշխատութեան մեռնամուխ լինիմք՝ սիրելով մեր Ա.զգը եւ փնտռելով Բարձրելոյն փառքը:

Ե. Պ. ՄԿՐՏԻՉ Ծ. ԳԱՅԾԱՃԵԱՆՑ.
Յ.Ախալցխա:

---

1. Սահման Օդերեւոյթաբանութեան.

1. — Օդերեւոյթաբանութիւն կըսուի Բնախօսութեան 1) այն մասը, որ կխօսի օդոյ կամ՝ եղանակին, մթնոլորտին մէջ պատահած երեւութից կամ փոփոխութեանց վերայ, որք սովորաբար եւս կըկոչուին օդերեւոյթ, կամ յունական բառիւ Մետեօրայ:

Այս երեւոյթները կբաժնուին՝ օդեղէն, որ են հողմ, մրրիկ և թաթիա, ջրեղէն, որ են մեգ, ամպ, անձրեւ, ցօղ, շաղ, եղեամն, ձիւն և կարկուտ, լուսեղէն, որ են փայլակ, կայծակ, ծիածան, բակ, արշալոյս արեգակնային և բևեռային արշալոյս:

Ընդհանուր գիտելիք.

2. Մթնոլորտ.—3. Օդ.

2. — Մթնոլորտ կըսուի օդին լայնատարած ընդարձակութիւնը, որ կշրջապատէ երկիրս, և որուն

---

(1) Բնախօսութիւնն բնական պիտութեան այն մասըն է, որ կխօսի կենդանեաց եւ բուսոց կենաց եւ անոնց վերայ:

մէջ կբարձրանան ամեն դոյացութիւնք, որոնք կըցնդուին հողագնտիս երեսէն: Օդ ըսելով կիմացուի պարունակուածը, և մթնոլորտ՝ պարունակողն. ինչպէս ծով ըսելով կհասկնամք ջրոց ժողովն այսպէս մթնոլորտով (կիմացուի) մթնոլորտի օդոյն սահմանը. զոր կպարզենք այժմ:

3. — Օդը անտես, թափանցիկ, անհամ, ձրնշական, առաձգական և հոսանելի մարմին մի է, որ թափանցիկ լինելով՝ միշտ աչքի տակ չի էնար, բայց զանազան փորձերով օդ լինելը հաստատուած է. որն որ երկրիս բոլորտիքը 45 անդրեական մղոնաւ կամ 16 փարսախ հեռաւորութեամբ կամ տարածութեամբ որոշ սահման մը պատած է: Օդը երիք կարգ կբաժանուի — վերին, ջրչին և սրսրչին. և այս երիք կարգը ի միասին առնելով՝ մթնոլորտ կամ Սահման օդոյ կըսուի: Այս օդը, ամեն կողմը հաւասար խտութիւն չունի. ծովու վերայ ու անոր մօտերը ամենէն աւելի խիտ է: Այս խտութեան պատճառը նորա (օդոյ) կարգերն են, ինչպէս երբ լեռան մը վերայ ելլելու լինիմք, կամ թէ կերպով մը լեռներէն վեր եղած օդոյ կողմերը բարձրանալու լինիմք, կտեսնեմք որ օդը կամաց կամաց կբարակնայ. ու թէ որ երիք մղոն վեր ելլենք, զոր օրինակ՝ Ալպեան լերանց մէջ Մոնպլան լեռան գլուխը, օդը այնպէս բարակ կը գտնեմք, որ մարդ կսկսի դժուար շունչ առնուլ տալ: Այս բարձրութենէն աւելի վեր քանի՛ կերթայ՝ նոյնպէս օդը կբարակնայ. այնպէս որ հասարակօրէն կկարծուի թէ 45 մղոն բարձրութենէն ետքը այլ եւս օդ չկայ, ու մթնոլորտին սահմանը այնտեղ կվերջանայ: Ասոր համար 4000 մեթր 1) բարձրութեան մէջ ծառերն չեն կարող աճիլ. վերջապէս հաստատուած է այսօր, որ ծովու երեսէն հաշուելով 6000 մեթր բարձրութենէ վեր և ոչ մէկ նշան բուսականութեան տեսնուած է:

---

(1) Մեթր ըսուած չափը, որ երկրիս միջօրէականին քառորդին կամ որ նոյն է ըսել, բեւեռէն մինչեւ Հասարակած եղած աղեղան տասն միլիոներորդ մասն է, եւ հաւասար է Գաղղիական 3 ոտնաչափի, 11 զծաչափի եւ 296 հազարորդաց զըծաչափի, որ հնարեցին 1789 ին:

Օդն երկու յատկութիւն ունի, ֆիզիքական ու քիմիական։ Ֆիզիքական յատկութիւններն են ծանրութիւն, պաղութիւն, ջերմութիւն, չորութիւն, խոնաւութիւն և այլն։

Ծանրութիւն օդոյ։

Օդը ամեն բաներու վերայ ճնշում կընէ, ինչու որ օդն ալ նիւթ լինելով պէտք է որ ծանրութիւն ունենայ, ուստի և իր տակը եղած բաներն վերայ ճնշում ընէ։ Ցայտնի բան է որ այս ճնշումը մթնոլորտին բարձրութեան նայելով կը փոխուի, այս ինքն՝ ստորին կարգերը աւելի շատ կլինի քան թէ վերի կարգերը, ու տեղ մը մթնոլորտը որչափ որ բարձր է, ճնշումն ալ այնչափ շատ կլինի։ Անոր համար ծովու երեսին վերայ ամենէն աւելի շատ կայ այս ճնշումը, ինչու որ այն տեղի մթնոլորտը ուրիշ տեղերէն աւելի բարձր է։ Օդոյն մարդոյս մարմնոյն վերայ ըրած ճնշումը 18077 քիլօկրամի չափ հաշուած է. յիրաւի այս ճնշումը շատ մեծ և ծանր կերեւայ, բայց և այնպէս շատ դիւրութեամբ կտանի մարդս, որովհետև անիկայ մարդուս մարմնոյն ամեն կողմերուն վերայ հաւասարապէս կազդէ, և այնպէս մարդուս կազմուածքին ներքին կողմը գտնուած կազերն օդոյն ճնշմանը հետ կհաւասարակշռուին 1)։

(1) Մթնոլորտը ճնշում մը կներգործէ այն ամեն մարմնոց վերայ, որ երկրիս մակերեւոյթին վերայ են. ծանրաչափի սիւնակին բարձրանալն այս ճնշման արդիւնքը կներկայացնէ. արդիւնք՝ որ կիվոփոխի ըստ մէտէորական պարագայից, եւ որուն միջինն է 1033 կրամ առ հարիւրամեթր քառակուսի։

Ինչպէս ամեն կենդանիք, մարդս ալ այս ճնշումը կըկրէ. չափահաս մարդոյ մարմնոյն մակերեւոյթը կրընայ մտածուիլ իբր 17500 հարիւրամեթր քառակուսի, ուրեմն այն ամբողջ ճնշումը, զոր մարդս կկրէ՝ դրէ թէ 18077 քիլօկրամ է։ Ա.յս ճնշումը չենք կրընար նմանեցնել, ոչ իբր ծանրութիւն մը ստանձնելու եւ ոչ իբրեւ բեռ մը բառնալու, մարմնոյն ամեն կողմըն ու ամեն տեղ կներգործէ, եւ իր ծանրութիւնն որչափ ալ որ լինի՝ չկրնար պատճառել մարդուս ոչ բեռ մը ծանր եւ ոչ նեղութիւն մը անոր անդամներուն ազատութեանը հակառակող։ Ա.հա օրինակ մը մէջ բերելու համար. երեւակայեմք ձեռքերնիս հորիզոնական դիրքով. այն ճնշումը, զոր կըկրէ ձեռքերնուս կռնակի երեսը՝ զուգակշիռ պիտի լինի այն ճնշմանն, որ հաւասարապէս կներգործէ մէջի երեսին (ափին) վերայ։ Մթնոլորտին ճնշումն, ամեն ճամբով մարդուս վերայ ներգործելով, կծգտի ընկճելու այն մասունքն՝ որ դուրսի դին են. այլ հակակշիռ է անոնց շականութեամբ հեղուկներու, որ կթրջեն մեր բոլոր ջիղերն եւ ձգտմամբ կազերու եւ ոդիներու, որ մեր աղեաց խոռոչներուն մէջ կհետեւին։ Ա.սկէց կհետեւի, որ եթէ մարմնոյն մէկ մասն ազատի այս ճնշման ազդեցութենէն, եթէ դատարկը տիրէ այս մասին վերայ, մորթը դուրս կմղուի ներքին ճնշմունքէ եւ իսկոյն երակներուն մէջի հեղուկներն ոչ եւս կրելով նոյն ճնշմունքը՝ կուգան ժողովելու այն երակներուն մէջ, ուր նուազ ճնշուած կզտնուին. սրտակի դրութիւնն այս հիման վերայ հաստատուած է։ Բայց այն պարագային մէջ, որ մթնոլորտի ճնշման պակասութիւն լինի, միայն բնաւ վերը ասածներուս պէս չի պատահեր, երակները կը մնան հաւասարապէս ճնշեալ բոլոր մարմնոյն մէջ, պզտիկ ուռոյց մը միայն տեղի կունենայ, որ կպատճառի փոքր խոռոչներու մէջ զտնուած կազերու տարածմանէն։ Ա.յս նիւթիս վերայ, յիշենք այս տեղ այն երեւոյթները, որ կզոյանան՝ երբ մթնոլորտի օդը կթափանցէ արտաստուաց խոռոչներուն մէջ ըստ հետեւանաց կուրծքի վէրքերու։

Ծանրաչափ։

Օդոյն ծանրութիւնը չափելու համար հնարեցին քնագէտները զանազան գործիքներ, ուստի այն գործիքներու մէկ տեսակը շինելու կերպը դընենք այս տեղ։ Օդաչափ կամ Ծանրաչափ գործիքը շինելու համար, նախ պէտք է որոշել ապակիէ այնպիսի խողովակ մը, որուն մէկ ծայրը գոց լինելով մատի մը չափ ալ հաստութիւն ունենայ. եթէ երկու ծայրն ալ բաց լինելու լինի՝ մէկ ծայրը կրակի վերայ դնելով լաւ մը իրար միացնելու է, այնպէս որ ամենևին ծակ կամ օդ ներս մտնելու տեղ մը չունենայ։ Ասկէց ետքը խողովակին միջի օդը հանելու է, եթէ ոչ միջի սրբուած հեղուկը վար վեր չի շարժիր. ու գործիքին

մէջի դտնուած օդը, մէջն եղած հեղուկին վերայ սաստիկ ճնշում մը ընելով՝ կըսկսի բաց եղած բերնէն դուրս թափիլ։ Խողովակին օդը պէտք է հետևեալ կերպով հանել. խողովակը քիչ մը կրակին վերայ պտըտցընելու է՝ ինչուան որ սկսի մէջի օդը անօսրանալ, եւթը բաց բերնէն քիչ մը սնդիկ (ժիվա) դնելով նորէն կրակին ցուցանելու է, այնպէս որ սնդիկին տաքնալովը մէջի օդը անօսրանայ ու դուրս ելլէ։ Ա յսպէս նորէն մէյ՝ալ

Բնական վիճակի մէջ փորատեաց ներքին Թաղանթը, որ կշրջապատէ զԹոք, կգտնուի պինդ կռնած կողից Թաղանթին վերայ։ Օդը բերնէն Թոքի մէջ կըմտնէ, քԹին ծակերէն եւ շնչափողէն, եւ կներգործէ ճնշում մը արտաքուստ դէպի ներս այն կերպով, որ Թոքն ստիպուած է հետեւելու կուրծքի վանդակին ընդլայնման եւ ամիոփման շարժմունքներուն, այն վայրկենէն, որ ծակ մը բացուի եւ աղատ ու դիւրին հաղորդակցութիւն մը կարենայ հաստատուիլ դուրսի օդոյն եւ արտաքուստ խոռոչին մէջ. մԹնոլորտին ճընշումը կներգործէ վերէն արտաքուստ դէպի ներս մի եւ նոյն Թանձրութեամբ՝ ինչպէս ներքուստ դէպի ներս շնչափողէն, եւ ընդերական Թաղանթն երկու հաւասար եւ հակառակ զօրութեանց մէջ դրուած կմնայ զուգակշիռ այն վիճակին մէջ, ուր յանկարծակի բըռնուած էր։ Ա յս Թաղանթն ալ չկրնար հետեւիլ ուրեմն կրծոց վանդակին շարժմունքներուն, որովհետեւ ներքին ճնշումը հակակշիռ է արտաքին ճնշմունքով։ Բայց արտաքին ճնշումն է հաւասարապէս զուգակըշիռ ներքին ճնշման հետ եւ չկրնար ոչ եւս որ եւ է կերպով մղում տալ Թոքային հիւթին արտաքուստ ի ներքս դէպի յետին կողմը կրծոց խոռոչին։ Բայց սակայն փորձը կցուցնէ, որ նման պարագայից մէջ Թոքը կամփոփի, եւ երեալով եւս քան զեւս պզտիկ տարածութիւն մը կառնու եւ կլենու ասեն կողմէն աղնայարի սիւնակին վերայ։ Դաստուե Պ. Պէրար իրաւամբ հաստատեց այս նիւթիս համար Թէ՝ կուրծքին բացուիլն, տուիՆն էր եւ ոչ Թէ պատճառ այս երեւոյթիս, եւ Թէ Թոքաց քանակին պակասիլը կվերաբերէր այն գործոյն կազմութեան հակադործող ճըշմարիտ սէ՛սպիտութեան մը։

մԹնոլորտին ճնշումը մեծ դեր կխաղայ մարդուս ստորին անդամոց մերձենականութեան մէջ։ Ստորին անդամոց կռնքի հետ ունեցած զօդակցութիւնը կը կազմուի զբստի ոսկեր գլխովն, որ կիսագունտի կը նմանի եւ մտած է ազդեր խոռոչին մէջ՝ որն որ նոյնպէս կիսագունտի ձեւով է։ Զբստի ոսկեր գլխոյն եւ աղդրային խոռոչին մէջ, առողջութեան ատեն, այնպիսի ճակատ առ ճակատ դոլ մը կայ իրարու հետ յերկուց մակերեւոյթից, որ մարդ կրնայ կտրել յօդակապներն ու ջիղերն, որ կպատեն այս զօդակցութիւն, առանց խանգարելու զբստի ոսկեր գլխոյն եւ աղդրային խոռոչին յարակցութիւնը։ Ա յս յարակցութեան պատճառը մԹնոլորտին ճնշումն է, որ այս (զբստի) ոսկեր գլխոյն վերայ ներգործելով ազդեր խորին մէջ ճշդիւ պահէ զայն։ Ա յս իրողութեան ճըշմարտութեան փորձ անելը դիւրին է, դի բաւական է յօդուածին երեսն՝ որ քանի մը կաղային պղպջակներ ներս Թափանցելով՝ զբստի ոսկեր գլուխը ազդրէն բաժնուի իյնայ։

Ա յս մէկ մեծ կարեւոր դէպք մի է, որով մեզ կյայտնուի Թէ քալելու ժամանակիս ջղային կարկամութեան հարկ չկայ զսպելու համար այն անդամն, որ կատարութերի իբրեւ ծանծանակ մը եւ կմնայ կանգուն առանց պզտիկ աշխատութիւն մը պահանջելու։ Եթէ մէկը կըզննէ բարձրութեանց աղեցութիւնը մարմնոյն վերայ, պէտք է դիտնալ որ մԹնոլորտի ճնշումը միայն չէ որ կներգործէ, Թէ (օդոյ) բարեխառնութիւնը շատ կպակսի, եւ Թէ օդոյն պակասելովը շողին աւելի արագ կցնդի։ Մենք դիտենք Թէ սրեան մէջ ծուլուած կազեր կան, եւ Թէ այս կազերուն բացարձակ էանակութիւնն արտաքին ճնշումէն կախում ունի։ Եթէ ճնշումը նուազի, այս կազերն արիւնային հեղուկէն զատուելու կձգտին եւ երակաց կողից վերայ ճնշում մը կը պատճառեն ներքուստ յարմարս։

զուտ լինի, եթէ ոչ գուշակութեանը վերայ տարբերութիւն կլինի՝ հեղուկին ծանրութեան պատճառաւ։ Ուստի մաքրելու համար ալ պէտք է որ մաքուր մորթէ մը անցնել մէկ քանի անգամ՝ մինչեւ որ այլ եւս սկսի մորթը իւր գոյնը փոփոխել։ Խողովակին վերջի ծայրը պէտք է 0 մը դնել, ու անկէ սկսել եւեթ եւս յաջորդաբար թուանշաններ նշանակել 1, 2, 3, 4, 5 ևլն ըսելով, որոնց առջին ալ պէտք է գրել՝ օդին փոփոխութեան անունները։ Խողովակին վերնագոյն ծայրը կամ թուանշանը հատած տեղը կցուցանէ անդկին խիստ բարձրացած մասը, որ գնատակին վարի կողմէն սկսելով 28 բթաչափի կհասնի, ուր տեղ որ նշանուած է անփոփոխ կամ պարզ օդ։ 27 երորդ բթաչափ աստիճանին առջևը նշանելու է մրբէլ։ 28-երորդ գծին առջևը նշանելու է փոփոխական։ Ասկէց ալ վարինը կցուցանէ հող և անձրև։ Նոյնպէս շարունակելու է միանգին ալ ամեն մէկ օդի փոփոխութիւն պատահած ժամանակը խողովակին վերայ դիտելով, ու որ աստիճանին վերայ անդիկը կեցեր է՝ անոր դիմացը նոյն փոփոխութեան անունը նշանակելով, և այսպէս բոլոր մթնոլորտական փոփոխութիւնները կրնայ ցուցուիլ կամ նշանակուիլ նոյն խողովակի տախտակին վերայ։ Գաղղիացիք իրենց գործածած օդաչափները՝ աստիճաններու հետևեալ կերպով կբաժանեն. նախ՝ փոփոխական բառը երկրորդ՝ լաւ, երրորդ՝ պայծառ, չորրորդ՝ ասպիէ կամ, հինգերորդ՝ անձրև կամ հող, վեցերորդ՝ ասպիէ անձրև, եօթներորդ՝ փոթորիկ ևլն։ Իսկ Լոնտրայի՝ կամ լաւ ևս՝ բոլոր Մեծին Բրիտանիոյ մէջ գործածուած ծանրաչափներուն աստիճանները հետևեալ կերպով կբաժանին. փոթորիկ բառը 28 աստիճանին դէմը կդնեն, ասկէց եօքը կարգաւ կուգան անձրև, անձրևային, փոփոխական, լաւ, պայծառ, չոր ևլն ևլն եղանակները։

Ա յս ամեն բաները լմնալէն ետև ուղղահայեաց գիրքով պատէ մը վայր կախելու է, ու անկէց ետքն ալ սկսելու է շարունակել դիտողութիւնն։ Կրնայ լինել որ օդաչափը կեցած տեղէն վերցնելով ուրիշ տեղ մը դնել պատահի, ու այս ընելու համար պէտք է աւելի զգուշութիւն, որ խողովակին մէջը օդը չմտնի։ Նոյնպէս կան ասոր նման անհամար գիտնալու արժանի դիտողութիւններ, որոնք այս տեղ զանց կընենք։

(Շարունակելի)

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ
ԿԱՄ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ։

«Մարդ քալէ ի քալէ գանյոց է-լոյ
Քղխէ պէսէլ»։

(Ս. Ա-եաց.)

Մտաւոր զարգացումն եթէ մարդկան հմտութեան և լուսաւոր դաղափարաց կառաջնորդէ, և մարդկութեան մէջ մեծ կշիռ ունի, անշուշտ առանց նպատակի չէ։

Նպատակն ամեն բանի և ձեռնարկութեան հիմն է։ Ասպա թէ ոչ՝ երբէք մի գործ կամ ձեռնարկութիւն՝ մի տեսակ նշանակութիւն՝ աշխատակից և արդիւնք չունենար։

Ամեն նպատակի մէջ ևս մի քալէ կամ օգտակար դիտումն և հետևանք պիտի լինի։

Բայց կան նպատակներ ևս՝ որք թէպետ բարի վախճանի ուղղեալ կլինին, բայց ոչ ամենեցուն համար բարի վախճան կարդիւնաւորեն, հետևաբար և ոչ ընդհանուրի համար բարի հետևանքով ամենուն համահաւատար հաճելի և սիրաժիլ կլինին։

Ինչպէս որ յօդուածոյս բուն նպատակն է՝ մէջ բերելը Տպաւորական զբօսանո-ճ կամ պատկերաւոր-ին-ը։

Սա այնպիսի մի նպատակ ունի, - այս ինքն՝ մարդկան միտքը մշակել, կարևոր դիտութիւնքը լուսաւոր առնել և զարգացնել, կենցաղօգուտ առարկաներով ճոխացնել, վերջապէս ըստ կարելւոյն երջանիկ և ապահով՝ միանգամայն արդիւնաւոր կենցաղավարութեան համար՝ ըստ պահանջման և բերման հանգամանաց ժամանակին՝ մեծ պաշարներ կըմթերէ մտաց մէջ, — որ անշուշտ հանրաբաղձալի և ամեն մարդոյ համար առաջին պէտքն է: Հետաքրքրութեան ծառայող ուսմանց առարկաները լրութեան տանք:

Այս նպատակ ամեն տեղ կամ յընդհանուրս կըմիրէ:

Սակայն նպատակին հետևանքը ամեն տեղ ընդհանուրին համար միօրինակ բան չէ և երբէք չէ կարող լինել՝ երբ տպաւորական զգեցման հետ բարոյականը ևս ի միասին մտտակարարուած չէ: — Ծնէ պէտ սորա մէջ ևս պայմաններ կան, որոց համար իւրաքանչիւր դպրոցին պիտի գրեմք:

Ինչպէս որ միայն գիտնալն կամ ուսած լինելն բաւական չէ, այլ նաև պէտք է ըստ այնմ գործել, և գործը ի բարին արդիւնաւորել:

ՄՏԱՒՈՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆՆ գլխաւորելիքն կաւանդէ կամ կուսուցանէ, իսկ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹԻՒՆ կամ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ պէտք է՝ զի գլխաւորելիսն գործադրել հրապուրէ՝ միշտ ի բարին:

Ի՞նչ օգուտ ունի միայն գիտնալն՝ թէ Քրիստոնէական կրօնն այսպէս և այնպէս է, սոյնպէս վարդապետութիւնքը և պատուէրները՝ առանց կատարելոյ քրիստոնէական պարտաւորութիւնքը, վերկարծ պատուէրները և բարեգործութիւնքը:

Ի՞նչ օգուտ ունի բժշկական արուեստը միայն իմանալն՝ առանց գործածելոյ այլոց օգտին և փրկութեան համար:

Ի՞նչ օգուտ ունի երկրագործութիւնը միայն իմանալն՝ առանց արուեստը գործածելոյ և արդիւնաւորելոյ, գոնէ այլոց ուսուցանելով:

Ի՞նչ օգուտ ունին շատ տեսակ արհեստագիտութիւնքը միայն իմանալն՝ առանց հասարակաց օգտին ի պէտս գործածելոյ:

Յայտնի բան է՝ երբ լաւ և ըստ արժանւոյն ուսած է և գիտէ՝ և պէտք է այսպէս աշխատիլ և ուսանիլ, յայնժամ պարտաւոր է նաև գործածել և օգտակար առնել:

Վարժարակիչն կամ դաստուն ևս պարտաւոր է և կուսուցանէ այնպէս՝ որ աշակերտն ևս քաջ գիտնայ և այլոց ուսուցանէ և օգտակար լինի:

Երդ ինքնին կգամք այս եղրակացութեան՝ զի իւրաքանչիւր գիտութեան և առարկայի դաստուն՝ ըստ պահանջման առարկային՝ պարտաւոր է ոչ միայն մտաւորապէս, այլ և բարոյապէս ուսանիլ իւր աշակերտին: Ուրեմն պարզ կերևի և անհրաժեշտ է՝ որ մտաւորական դաստիարակութեան հետ՝ բարոյական կրթութիւն կամ դաստիարակութիւնն ևս համընթաց պէտք է լինի:

Ընդհանուր առմամբ՝ դաստիարակութեան նպատակին շահը և արդիւնքը ամեն տեղ միօրինակ չէ, և օտար կամ տարբեր պայմաններ ունեցող խնդիրներ ևս ընդ նմին ընդունել լինելով, մի և նոյն ժամանակ՝ շատ տեղ դաստիարակութեան բարոյական մասը ոչ միայն կրկին տարբեր

պայմաններ ունի, այլ և կան տեղեր՝ ուր անունը անգամ գրեա թէ չկայ՝ թող թէ արդիւնքը։

Եւ ահա այս խնդրէ կհետևի՝ որ դասախարատութիւնն փոխանակ բարի համակրութիւն գտանելոյ և արդիւնաւորուելոյ, ընդհակառակն՝ շատ տեղ ատելութեանց կենթարկուի, և եթէ բարձր իշխանութեան պարտադիր զօրութիւն չմիջամտէ, և հրապուրիչ միջոցներ չլինին, դաստիարակութեան խնդիրը շատ ամուլ կամ անձուկ դրից մէջ կմնայ։

Ընդ որում վերայ դարձնելով խօսքը՝ օրինակներով ապացուցանեմք։

(Ն յառաջիկայս)

Վ. ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ.

ԾԵՐՆ Ի ՄԱՍԻՍ.

Ելաւ Մասեաց ընդ լեառն ի վեր հայթայթելով բարձրացայ,
Վ՚իմ ի վէմ՝ ժայռից ի ժայռս՝ ոտոտաելով խոնջեցայ.
Սպարթախիտ ծառ ու տեսի, փոքրիկ ալբիւր առընթեր,
Ընկղմնեցայ հպի առնուլ՝ ուր կայր գալար բուսաբեր։
Երեսս էր դէպ հիւսիսարևելք, ինքնս յոգնած չափազանց,
Ձկին աչացս պարզ երևիր գագաթք բլրոց, ծագք լերանց.
Որոց վերայ գորշ մառախուղ տարածել էր իւր ծածկոյթ,
Որ խափանէր քողարկելով բնութեան ամեն երևոյթ։
Միայնութիւնս զես նեղացոյց, ասի՝ երնէկ այս աղբիւր,
Ընկերանայր առանձնութեանս, և պատմէր ինձ զանցեալս իւր.
Երբեօք սա ևս ինձպէս ծերը է, թէ գիտնէն նոր է բղխել,
Կամ թէ այս ծառ ինքնաբոյս է, թէ ձեռք մարդոյ է տնկել։
Ձայն լսուեցաւ աղբերակինէն, երբ ի խորոց անդնդոց,
Հեծութիւն էր հառաչանաց թախծեալ սրտից և հոգւոց.
Ասաց ՚՚Պետ դու եօթանասուն տարիքդ նոր ես կատարել,
Էլ ևս եօթնեակ հազարամեակք եմ այս սարում բղխրել։
Ո՛րն օր դեռևէն սողոսկելով ջուրս կարիաջմամբ դուրս վազեց,
Երբ ծեր Մասիս իւր կոկորդէն ծծմբախառն բոց ժայթքեց.
Հրաժարան պետք վայր խաղացին գագաթէն մինչ ի ստորոտ,
Իմ ծագման հետ ձայնք հնչեցին հըրաւք, շանթիկ և որոտ։
Մինչ ևս այս տեղ խոխոջայի, Աևան յաջմէ լըճացաւ,
Եւ հրպղտան վըշիտ լըճին՝ նոր մատուռակ կարկինցաւ,
Որպէս Պատառ գետն ի նեղքուստ իմ ծորանէս բաղկացած,
Շրջեղ բլրի կշռէն անցաւ՝ հանդիպն այլոց վըտակաց։
Երբ նախկին հայն ինձ յայց եկաւ՝ ձեռին ունէր մկի ոսիկ,
Ոչ գիտեմ թէ ի՞նչ խորհրդով բերից անկից ինձ մօտիկ.

Հայկակիա անուն կոչեց, ուներ պատուղ քաղցրահամ,
Որ արտ բերէ միայն պահիճ՝ որոյ սերմ է տապահամ:
Այնուհետեւ երկու հազար եւ հինգ հարիւր ամք եղեն,
Որ ակնկոր դէպ ի ստորոտս միշտ կըսպաղամ այս տեղէն.
Ո՛չ թէ ինչքը են անց կացել, ինչքը տեսել եմ աչօք,
Ի՞նչ քաղաքներ ալքայանիստ, փառազարդեալ պըսակօք: ,,
Այս միջոցին շողաց արեւ, փարատավեցաւ մէգ մըթին,
Լերինք զուարթ երեւեցան զարարագեղ ի հովտին.
Յայնկոյս լերանց անշուք բլրակք ծածկեալ ցախիւք մացառաց,
Որս յառէին աղբեր անթարթ աչք տողոքեալ յարտասուաց:
“ Կը տեսանեմ՝ ասաց Թախծեալ՝ մոլախառեալ այն բլուրք,
Զորովք մածեալ հազարամեայց կան կիսամաշ խանձարուրք.
Մին Ըրմաւրի է ամայի աւերակաց մընացորդ,
Որ վաղնջուց նախնեաց Հայոց երջանկութեան էր հաղորդ:
Միւսն Ըրտաշատ՝ Աննիբազայ ձախորդ կենաց յիշատակ.
Քանի՛ գահոյս դիւցազնական ծածկէ իւր հին փըլատակ.
Անդ՝ Երուանդեան նստաւ Տիգրան, ասդ՝ Տիգրան Մեծ Պարթեւեան,
Ըրշակունեաց աստ ուռճացան փուճնջք սարդինեանց սգաճուխեան:
Կը տեսանեմ այն երրորդ բլուր՝ Շըրէկի մօտ բարձրացած,
Ուր եւ Քաստաղ լուռ եւ մունջ կայ իւր ափանց մէջ շուտաճած.
Ըրտխմէդ է այն վաղեմի, հընոց՝ Եւան Վարդգէսեան,
Վաղարշապատ կոչէց Վաղարշ՝ կանգնեալ անուան իւր արձան,,:
Ես հարցուցի, ,,Ո՞նչ է ապա դէղատեսիլ այն կերտուած,
Որ տատրակի նըման արխուր ի դաշտավայրն կայ նստած.
Երկք եւ չորս դրեւս ունի, կարծես՝ յերկինս կը նայի,
Կարծես Քաստաղ նորա աչաց արտասուօք կայ յիւր կայի,,:
Յոգւոց հանեց փոքրիկ աղբիւրն, հառաչանքն էր ցաւագին,
Ասաց, ,, Ահա անդ է միայն յոյս ապաւէն Հայ Աղգին.
Որ կորցրել է չարաբաստ՝ երանաւէտ իւր վիճակ,
Քաջիկ նախնեաց բարեաց նշխարք, ազատութեան պերճ պըսակ:
Որ տէր աղգաց էր եւ ազանց, այժմիկ թշուառ է խեղճուկ . . . ,
Զարիւն նորա ծըծեն անյագ կովպիոյ եւ ագռաւ.
Զըլատատակ աշխատութիւն կըրէ ի ծօթ տունչեան,
Ես ձիշերի ոչ տեսանէ զերես խոսն ինչ հանդստեան:
Յորժամ կորոյս իւր ապարօշ չորիցս կապեալ ի գըլուխ,
Գետահեռեալ հեղան ի նա հոսանք չարեաց յորդաբուղխ.
Ընչաաեցան ի գրկաց Մօր, յօտարութիւն վարեցան,

Զեռաց ի ձեռս յափաւիկով ընդ ծագս համային ցնդեցան։
Ընյս տատրակի ձագերն էին որք որս հղին ձիրանաց,
Թէ անդնդաց թէ պասկուձից սրավառ ձանկից և մազլաց.
Մայրն անօրդի վիր կընայի՝ գուցէ թերևս իւր ծընունդք,
Ի թևատակ իւր ժողովվին՝ անցեալ ընդ վիհ և անդունդք։
Ընյս վայր՝ ուր կայ մաքուր տատրակն, որ քեզ Թուի անապատ,
Ընդ երջանիկ մայրաքաղաք Վաղարշապատ մարդաշատ.
Նա այն կերտուած՝ որ քեզ Թուեց տատրակ Թառեալ յամայի,
Ընդմիաճին է Սարսնարան և առագաստ Մխածնի։
Դու ևս Ասյ չի՞ս՝ մի ի ձագուց այն տատրակին անարատ,
Քեզ ևս ձիրանք գիշախանձից չի՞ն ազդել ցաւ անփարատ.
Ընդ ձանչգիր՝ սա է քո Մայր, սուրբ Աթոռն Ընմահ փեսայի,
Նա դու ծընունդ մի ի բիւրուց սորա մաքուր արգանդի։
Կանքդ արգասիք են կայլակաց Սորա անբիծ Սուրբ Սահանց,
Երախտապարտ մաքուր դայլից գորովալիր դիեցմանց.
Ինքն է Դրախտն Աստուածատունկ, և քառառաջ իւր ա ղբիւրք,
Որոց որպէս ի շրթից կաթին յագեալ անանին բիւրուց բիւրք։
Նա ի նանիր աչք և գլուխն չէ դէպ յերկինս բարձրացրել,
Քաջայոյս է որ իւր փեսային կուգայ խոստմունքն լըսցնել.
Շուրջ զԱսուօքս քառապատիկ կրկնել անդրաւ ոսկեզար,
Յարուցանել Ելքսեդեկ խաղաղարար և արդար։
Ընդ՝ ծերունի, առատ իմ ջուրք՝ որով Քաստաղ կը անանէր,
Նուաղել են յականս իւրեանց, վասն այն չէ ծառս պտղաբեր.
Ընյս ջուր որ արդ կը տեսանես՝ չէ ինքնաբուղս ջուր նախկին,
Ընյլ դառնահամ արտօսր յորդեալ յաչաց որբուկ Ասյ աղջին։
Խարձրագլուխ Ընդմիաճին՝ զիմդ կարծես, զի՞նչ խնդրէ,
Որ քեզ Թուեց Թէ դէպ յերկինս իւր աչք սըրահիւ կը յառէ.
Նկելամուտ լեր՝ որ այս Դշխոյ որդեկորոյս Թագուհի,
Ընտասուալից աչք իւր կուդղէ յամեն կողմունս աշխարհի։
Մերթ ի Դուին կ՝արկանէ ակն ողբալ նորին զաւակաց,
Դառնակսկիծ յուշ բերելով վաղանցելոց յիշատակ.
Մինչ Մեծ Վահան Մամիկոնեան իւր անկսպար արուեստիւն
Ի գործ հղեալ հանդիսանայր յԱզգին իւրոյ փրկութիւն։
Ընդ էր Վարդան իւր Ասօրեցայր քանի ամօք նախ քան զայն,
Քաշել դըրօշ ազատութեան դէմ Յազկերտի բռնութեան.
Ընդ և Վասակ ազգամատնիչ դարանակալ Ասյրենեաց,
Ձար օրինակ եղև յետնոց և համան իւր նմանեաց։

Խայց նա գահ էր արքունական, վ֊ռամշապուհ անդ էր նստել,
Սուրբ Խահակ ընդ Մեսրոպայ՝ ի սէր Ազգին անդ մաշուել
Ընդ զառաջինն բացան դպրոցք ՚այոց ազգի դպրութեան,
Ընտի չուեցին մեր թարգմանիչք ի կրթարանս յունական։
Ապա դառնայ դէպ յԱխուրեան սրզալ գՆուռյն փըլատակ,
Ուր գեղապանծ Խագրատունեաց գըլուխ պճնէր ի պըսակ.
Հ֊ուրջ զնովաւ բոլորէին հանդոյն վարդից քաջազունք,
Եւ յասպարէս սիեզերաց հռչակէին դիւցազունք։
Եկեղեցին և ՚այրենիք պատսպարեալ ի նըմին,
Ի դարս կրկին մխիթարէր յորդիս նորին սիրածին.
Մինչ յաչաղկոտ Խուզանդիոն և ՚ագարուն արշաւան,
Օ֊երկնադիտակ բրգունս նորա տապաստ արկին ի կործան։
Ապա ի Սիս հայի ցաւովք, և ի նորին գահ խարխուլ,
Ազբերաբար հեղու զարտօսր բղխեալ անդուլ, այլ զանխուլ,
Թէ ո՞ր է գահ Արիւկեցւոց՝ վիրացս վերջին պալասան,
Օ֊որ ազգասէր իմաստութեամբ աչ քաջ կազմեաց Ռուբէնեան։
Ո՞ր են նորա ահեղ Թորոսք ջոկաց Յունաց արհաւիր,
Յորոց փախչէր ահասարսուռ ՚ելլէնեան ազգ և երկիր.
Եւ Մեծ Լ֊էոն զարդ խաչակրաց՝ որ Տրդատայն Թագ փառաց,
Ի գլուխ Ազգին և ՚այրենեաց անդ զայս երիցս նորոգեաց։
՚Ուսկ ամբառնայ զարտասուաթոր աչս իւր ի վեր դէպ յերկին,
Մշատռուն֊ էհկեկանօք առ իւր փեսայն Միածին,
Թէ ո՞վ ծընող որբ զաւակաց, երբ հասցէ վերջ իմ ցաւոց,
Երբ բուժեսցին քո գթութեամբ ոգեպահանջ վերք և խոց։
Յիշեա զբան ծառայի քո՝ յուսացուցեր յոր և գիս,
Ի ծոց ՚արսինս քո ժողովել զմեր ծնունդս և զորդիս,
Գալ և բնակիլ յառագաստիս, նորոգել զիմ ՚արնաբան,
Ընմահ Գրիգոր ընդ սիրելւոյդ ազգէ յազգ տալ ինձ պաշտպան։
Յոտս աստ Մասեաց՝ ուր զառաջինն գՏապան քո հանգուցեր,
Յեղեմատունկ բուրաստանէն փոխել զծառն կենսաբեր,
Ի Սիոնյէ փոխադրել աստ զանննւթի տախտակս քարեղէն,
Մատամբ չնորհաց դրոշմեալ անջինջ զօրէնս սիրոյ ազգաշէն։
Ընդ Սիոնի՝ ուր հաստեցեր՝ զընթերեաց խորհուրդ վերկարար,
Նորակերտել աստ ի ծոց իմ նոր վերնատուն հլուշափառ.
Օ֊ի յիս մարմին և արիւն քո երկնատեղաց մանանայ,
Եւ միաբուղխ աղբիւր կենաց յատէժ որդւոց մեր Հայ։
Գողգոթայի չնորհ խաչիդ՝ ուր տեւեցեր ինննեակ ժամ,

Տաղաւարեալ անկեւտ աւուրըք յիս հանգիցէ յարաժամ.
Եւ Զիթենեաց լերին՝ ուր հնաք զարշապարացդ նշմարին,
Փառք և պարծանք ասա տարրասցին յանտուտ նշան քո զարձին։
Ռանղի որ օր հինն այն Սիոն զքեզ ի խաչ բևեռեաց,
Դարձար առ Հայր Ռո առաքիչ անցեալ ընդ սար ձիթենեաց.
Այլ փայթ իջեր Հօրդ ի ծոցոյ ոսկի ուռամբ հաստատել,
Ի հիմունս իմ խարիսխ սակի քեզ բնակարան նոր հաստել։
Դու ասացեր՝ այս է հանգիստ իմոյ Անձին յաւիտեան.
Ասա բնակեցայց, զի սա զրաւէ ղննորհ իմոյ հաճութեան.
Եւ իմ դասերք երեսնեւհօթին ասա իլապտեր Աստղխոյց,
Ջարիւն իւրեանց կայլակեցին իբր հանդանակ սուրբ ձիթոյ։
Մին է զլուխ իմ՝ որ եմ Դշխոյ, Հարսն երկնաւոր փեսային,
Երիք զլուխք օրիորդաց զինչեաց ի սէր Միածնի.
Յորժամ բերցէ իմ տարփալին անմահ փեսայն ոսկիդար,
Յորդեսցի ջուր իմ ի Ռասաղ, և պտուղ քաղցր բերցէ Ծառ ,, ։

ԵՐՈՒՆԻ ԳԱԲՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ.

ԱՋԳԱՅԻՆ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՎՈՐԵԼՈՑ.

Համայն աշխարհ լսեց Ասիոյ մի քանի կողմանց մէջ՝ ի Գալատիա, Լիւղդատ, Լըն. Լըն. տիրած սաստիկ սովը, որով բազում մարդիկ չարաչար կատղնապին, մանաւանդ խիստ ձմեռ Լա վերաժամանելով և Ռանապարհայց հաղորդակցութիւնք գժուարանալով՝ զրկեալ իսպառ յուսահատութեան մէջ կատղապին տեղական թշուառ բնակիչքն։ Ե՛յն ասասիձանի հասած են՝ որ զոհ սիրտ լինին եթէ ուտելոյ խոտ անգամ դանեն։

Թշուառ ծնողք, ինքեանք սովալուկ տադնապելէ զատ՝ իւրեանց զաւակաց ազիողորմ հեկեկանքը լսելով և չկարողանալով հանդուրժել՝ ոմանք ի յուսահատութենէ ստիպեալ՝ զաղթականութեան կելնեն և ի ձանապարհին կամ անօթութենէն կմեռնին և կամ ցրտէն կսառին. ոմանք ընդ զաւակացն ի միասին արտասուաց հեղեղներ հոսեցուով և աշխարելով ժամէ ի ժամ կսպասեն մահուան ձիրանաց զոհ երթալոյ. մինչև անգամ մի քանի ծնողք իւրեանց զաւակունքը մորթած են ի սնունդ անձանցն մի պաշար հայթայթելոյ կատաղի և գազանական մոլութեամբ՝ և խելագարութեամբ ևն։

Ահա այս հակիրճ կտորէն կիմացուի Ասիոյ բնակչաց սովալուկ վիճակը, զոր հետաքրքիր երկիրներ և օտար աղգեր անգամ լսելով՝ մարդասիրաբար ի գութ կշարժին և կարևոր օգնութիւններ կհասուցանեն։

Տեղական Կառավարութիւն ամեն ջանք և ճնարք ի գործ կդնէ սովելոց դառն վիճակը թեթևացնելոյ համար։

Տաճկաստանի ամեն կողմն հանգանակութիւններ բացուած են ինպատ սովելոց, ինչպէս նաև նոյն կողմեր բնակիչ եղող իւրաքանչիւր ազգայ ի Պօլիս գանուած Պաարիարքարանաց և գլխաւորաց կողմանէ ևս յատուկ յանձնախումբեր կազմած՝ իւրաքանչիւրն իւր ազգի համար առանձին հանգանակութիւն բացած է և օգնութիւն կհասցնէ տառապելոց:

Ըստ այսմ Պօլսոյ Հայոց Պաարիարքարանի կողմէն ևս մեր սովալուկ եղբարց համար ամեն կարելի միջոց ձեռք առնելով՝ օգնութիւնները հայթայթած և հասուցած են որոց արժան է: Մի և նոյն ժամանակ՝ ինչպէս սովալուկ Հայոց տեղական ազգային մի քանի Ծատրական խորհուրդներէն պատասխանի հեռագիրներ, նոյնպէս Պօլսոյ Հայոց Ս. Պաարիարք Գերբ. Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոս Թաղիանճագին գրութիւն և հեռագիր վճռագործին առ Վ. Տ. Հայրապետ մեր, որով կհայցէին Ռուսաստանի Հայերէն ևս օգնութիւններ հասցնել առ սովալուկ Հայս:

Վ. Տ. Հայրապետ՝ ըստ արամադրութեան օրինաց՝ ներկայ ամսոյս մէջ կայսերական Կառավարութենէն թոյլտուութիւն ընդունելով՝ Սինոդի միջոցաւ Ռուսական Տանէից և Հոգևոր կառավարութենց վերայ պէտք եղած պատուէրները հասցուց և անօրինից՝ ամեն կողմ նպաստներ հաւաքելոյ համար:

Արդ մեր սիրելի եղբայրներ անշուշտ կզգան Ասիաբնակ Հայոց,—որք ևս մեր սիրելի և հարազատ եղբայրներ են,—սովոյն տիրած կողմերում գտանելաչ Հոգևոր հովիւ և հնձգ հոգւոյ սովալուկ Հայոց կը կրկնակի ջերմեռանդ և թշուառ վիճակը և մանաւանդ ձգնաժամ վտանգը, կիսութեան ըստ կարելոյ ձեռն օգնութեան կարկառելոյ, քանզ գիտնալով՝ որ ամեն մի կոպէկը՝ մահուան ճիրաններէն մի մի հայ՝ մեն մի սովալուկ եղբայրը կորզելոյ պիտի ծառայէ:

Ո՛հ, ովքի՞նչ քան զայս նուիրական առաքինութիւն վսեմ և գերազանց կարող է լինել քաղցածին հայ տալով, մերկը ըզգեցնելով: Ըստ որում աշխարհի Փրկիչ Յիսուս Քրիստոս այսպիսի առաքինութիւնը լինքեան արած կընդունի: Ո՞ր թողութիւ՝ որ այն քաղցածները՝ Հայ և մեր արեանակից հարազատ եղբայրները են, և անդադար և սրտառուչ պաղատանօք կբաղձեն մեր սրտից ղգացումները և աղիքները կգալարեն կարծես հոգեվարք և շնչասպառ անկեալ՝ գո—ն, օգնո—ՂԻ—ն և հա՜ յայցելով:

Հայեր, ողջամիտ և հարազատ Հայեր, մեր բարեհամբաւեալ սովորական առատասրտութեամբ և ողորմածութեամբ փութամք մեր եղբարց օգնելոյ և զնոսա ըստ կարելւոյն մխիթարելոյ:

Ի ԳԻՍՈՒ ՎԱՆՔ.

Խմբագրութեան Աբաթայ ամսագրոյ.

Նուիրեալ Վիճակումն երկու նշանաւոր հինաւրեայ Վանորայք կան,—Ճալէթու և Սրբոյն Եղիշէի Առաքելոյն Գիսու.—այն Վանորայք ի վաղուց անտի ցայսօր պահպանուած են և պահպանվում են տեղական Յաջորդ Վարդապետաց վերահայեցողութեամբը: Ճալէթու վանուց շինութեանց մէջ ժամանակ առ ժամանակ վերանորոգութիւններ են եղած, որպէս ի ժամանակի . . . . . Արամեանցի, նոյնպէս և ներկայ Յաջորդ Վրթանէս Վարդապետի Մուրատեանց: Թէպէտ Գիսու Վանուց համար չեմ մոռանում ասել՝ զի Արամեանցի օրօքն ի

նմին հետ հետզհետէ եղել են վերանորոգութիւնները առանձին տրօք բարիպաշտ ժողովրդոց նուէրքով, բայց սենեակներն այնպէս կիսակատար մնում էին, յորս իջևանելոյ հնար չկար, ուստի և մեծ նեղութիւն էր լինում սրտեռանդն ուխտաւորաց, մանաւանդ անձրևային ժամանակներում։

Այս (անցեալ) 1874 թուականում, Վիճակիս Ծաջորդն՝ ձեռն զարկեց նորոգել այս վանքի սենեակների շինութեանց թերութիւնները։ Նախ հրաւիրեց լաւիւր մօտ դարբիններըն, պատուիրեց ուսուցանել խրատական բաներ խօսելով՝ յորդորեց նորանց որ ամեն մէկն վանքի սենեակների լուսամուտների համար՝ մէկ հատ երկաթակապ վանդակ շինեն ի յիշատակ կենդանեաց և ննջեցելոց իւրեանց։ ապա ուրախութեամբ յարգելով Վարդապետի այսօրինակ առաջարկութիւնը կատարեցին։ Այնուհետև շարունակաբար միւս արհեստաւորները հրաւիրեց։ Այս կերպով՝ փառք Աստուծոյ՝ կարճ միջոցում՝ պատրաստելով շինութեան բոլոր պարագաներն և այլ ծախուց համար էլ դումար դրամոյ՝ անձամբ կանդնելով և հսկելով՝ վերջացրեց աւելացնելով նորոգ շինութեանս գեղեցկութիւնը՝ տախտակամած պօլով և այլովք՝ նա և վերանորոգելով արևմտեան և հիւսիսային կողմերի պարիսպները։ — Նորոգեալ սենեակներն են երկք։

Քաղաքական վաճառականութեամբ պարապող Գողթան գաւառեցի Հանդամէջ գիւղցի պարոն Կրիկոր Մկրտչեանն ևս՝ յիշեալ Ծաջորդէն խրախուսելով՝ Գիսու վանքին մի ճաշոց նուիրեց՝ ի յիշատակ ծնողաց իւրոց։

Արդի Ծաջորդ՝ յօրէ մուտ գործելոյ ի պաշտօնն՝ —ի 1871— ցայսօր թէև շատ աշխատութիւններ ունի, թէ վանօրէից բարեկարգութեան վրայ, և թէ ուսումնարանաց ապառիկ արդեանց հոգատարութեանց համար, որոնց ժողովմանը յոյս չկար, բայց նոցա ոչ մէկն այնքան զգալի չերևում հասարակութեան աչքին, որքան Գիսու վանուց սենեկայ նորոգման համար արած ջանքն։

Վան որոյ՝ նուիրոյ հասարակութեան բարեմիտ անձինքներն՝ իւրեանց խորին շնորհակալութիւնը մատուցանելով յիշատակեալ Փոխանորդին, և նորին ձեռնտու ազգայէն անձանց՝ ներկայ շինութեան մասին, ամենախոնարհաբար խնդրում են Ձեր արդարախօս ամստատարակի միջոցաւ հրատարակել այս ի գիտութիւն համազգայնոց մերոց, ի խրախուսութիւն աշխատակիցն վարդապետին, և ի բարի նախանձ այլոց։

Ց. ՄԵԼՔՈՆԵԱՆՑ.

ց 30 Դեկ. 1874 ի
Ի Նոռիխ.

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑԱՑ ՀԱՑՈՑ ԹԷԼԱԻ.

Ի՞՞քաբրոՆեան Աբթաղ ամաբրոյ։

Մէկ նաւի ղեկավարը՝ թէ որ ունենայ քաջ հմտութիւն ծովագնացութեան, և հոգմոց բռնութիւնէն անվհատ սիրտ, անկասկած նա կարող է զազանացեալ ալեաց զօրութիւնը խորտակելով ուղղել իւր նաւը դէպ ի նաւահանգիստ։ այսպէս եթէ մի ժամանակէ հետէ մեր ազգի ղեկավարները ունենային քաջ հմտութիւն ազգի կառավարութեան, մեր ազգը ի վաղուց պիտի նմանէր և հաւասարուէր ուսումնական յառաջադիմութեամբ և բարուքեալ վիճակով Եւրոպական լուսաւորեալ ազգաց հետ. սակայն ցաւօք սրտի պէտք է ասենք՝ որ մեր ազգը ըստ մեծի մասին նոր կամի ոտք դընել ցանկալի ուսման այն աստիճանին՝ որոյ ծայրը արդէն հասել են Եւրոպական ինչ ազգերը ազգիս և այն յառաջադիմութիւնն էլ՝ գլխաւորապէս է անձնազոհ աշխատութեամբ և քաջահմուտ կառավարութեամբ Հայրենեաց վերանորոգիչ Գէորգ Դ. Կաթուղիկոսի, որ այնպիսի միջոցներով և այնպիսի հնարքներով կաշխատի մտաւորական և բարոյական յառաջադիմութիւնը ազգի մէջ տարածել, որ և օտար ազգերին անգամ նախանձելի է եղած, որոնց շատերէ լսած են վերոյիշեալ արհուն և հմուտ կառավարութեան վերայ մեծ դոլհստներ։ Մեր Վեհափառ Հայրապետի հմուտ կառավարութեան կարևոր մասերէն մէկն էլ ուսումնականն է, որոյ համար հաստատել է վիճակների մէջ՝ վիճակաւորներին աջակից Թեմական վերատեսուչներ, որոց միայն պաշտօնը է ուսումնարանների բարեկարգութիւնը։ Արդարև այս կարգադրութիւնը մեծ նշանակութիւն տուաւ ուս-

ման յառաջադիմութեանը ազդիս մէջ, ինչպէս Վրաստանի Հայոց Թէմական վերատեսուչը՝ աշխատասէր և ուսումնագէտ անձն գոլով՝ անդադար կաշխատի՝ այս վիճակի բոլոր դպրոցների կատարելագործութիւնը այլ և այլ եղանակաւ բարեկարգել, որոց մէջ է Թէլաւի համար ևս արածը։ Նա գալով Թէլաւ անցեալ 74 Թուականի դեկտ. 2ին, տեսնելով դպրոցաց արդեանց սակաւութիւնը՝ ըսկսաւ Մայր եկեղեցւոյ մէջ մեծահանդէս պատարագից յետոյ Վրաց լեզուաւ խիստ ազդու քարոզ խօսիլ և ապա հրաւիրել ժողովուրդը ի Գայիանեան ուսումնարան ստորագրել նուէր յօգուտ երկսեռ դպրոցաց, Թէլաւի Հայ ժողովրդականք թէ և շատ բարեպաշտական և ազգասիրական յատկութիւններ ունին, սակայն ուսման յարդը և նշանակութիւնը նոցա մէջ ուշ մուտ գործելով՝ վարագուրված էր ցարդ նոցա բարի յատկութիւններ։ վասն որոյ տեսնելով պատճառը, ցոյց տուին և նոքա էլ իրանց բարի և ազգասիրական յատկութիւնները։ Թէլաւի Հայոց գործակատար լինելով Գէորգ աւագ քահանայն Տ. Սարգսեանց, կամեցաւ այսպիսի բարենպատակ գործքի մէջ սիրտ տալ իւր համաքաղաքացի ժողովրդոց, վասն որոյ նուիրեց երկու հարիւր ռուբլի յօգուտ երկսեռ դպրոցաց քաղաքիս, որին հետևելով բարեկրօն քահանայք և բարեպաշտ ժողովրդականք՝ ցոյց տուին արդարև իրանց առատանուէր սփորագրութեամբ ազգասիրութիւնը և ուսումնասիրութիւնը, որ և ի նոյն օրէ՝ այս ինքն դեկտ. 8էն ցայսօր ստորագրուած գումարն հասած է 2265 ռուբլւոյ, և ստորագրութիւնը գարձեալ կշարունակէ բարեկրօն գործակատարն։

Հայոց լեզուի ուսուցիչն էլ Մայր Աթոռոյդ Թանգարանէն չորս հատ տպեալ Դանիէլի Թերթ բերել տուած լինելով, սովրեցուցած էր չորս օրիորդաց Դանիէլի ընթերցանութեան ձևը, որոնք ամսոյս 5ին երեկոյեանը սկսան պարզ մաքուր և հայացի արտաբերութեամբ կարդալ քաղաքիս ասւազ եկեղեցւոյ մէջ, որ այն ստուիճան ներգործեց ժողովրդոց սրտերը, որք թախանձեցին վերոյիշեալ գործակատարից պատրաստել տալ Ցարութեան Հրաշալուզի երեկոյեան համար՝ Հայոց երեք եկեղեցեաց մէջ ևս նոյնգունակ «Դանիէլին», կարդացողներ, որպէս զի բոլոր հասարակութիւնը ևս այն հոգևոր մխիթարութիւնը տեսնեն, զգան և նկատեն իրանց զուրկ լինելը այն ճոխ և քաղցրաբարբառ Հայկական լեզուագիտութենէն՝ ևս և ուսումնագիտութենէն, որով և դարձեալ իրախուսին իւրեանց որդւոց յառաջադիմութեանց համար՝ յամենայն դէպս ուրախ սրտիւ անձնանուէր լինիլ։

Դ. ԳՐԻԳՈՐ Տ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆՑ.

8 Յունվ. 1875,
ի Թէլաւ.

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱԿ ՄՏԻՑ ԵՒ ՆԱԽՈՒՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ ՀԱՑՈՑ ԾԱԿԱՆ ԵՐԿՍԵՌ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԱՑ ի 1874 ԱՄԻ։

Ի՛ք֊փ֊ր֊ր֊ի֊ն֊ Աբաբա ամաքբոյ։

Հոգաբարձութիւն Աստրախանայ Հայոց Ծխական երկսեռ Հոգևոր դպրոցաց ընդ սմին առաքելով ի Խմբագրատուն Արարատ ամսագրոյ զՀամառօտ հաշուեցուցակ մտից և ծախուց երկսեռ դպրոցաց վասն 1874 ամի, խնդրէ իւրոյս ածել տպագրութեամբ։ Յէջս ամսագրոյ յընդհանուր տեղեկութիւն ամենասիրելի համազգայնոց։

Հոգաբարձուք Յովսէփ Աւագ Քահանայ Բունկաթեանց
Գրիգոր Յովհաննեանց
Սիմէօն Պօղոսեանց
Սարգիս Բուրջալեան։

Մնացորդք ի 1873 Թուականէ՝	Ռ.	Կ.
Մի դրամատոմսակ վաճառականական Դրամատան Աստրախանայ, տուեալ 2 սեպտեմբերի 1872 ամի համար 2017, գումարաւ . .	1000	
Մի դրամատոմսակ Քաղաքային Հասարակական Դրամատան Աստրախանայ, տուեալ ի 1 Նոյեմբերի 1873 ամի համար 66, գումարաւ . .	1200	
Երկու դրամատոմսակք առաջին և երկրորդ Նրքին փոխառութեան 1864 և 1866 ամից, համարօք սերիից 09548, և 12073, և տոմսակայ 1· և 37 գումարաւ	315	
Պատրաստի դրամք . . .	52	63 1/4
	2567	63 1/4

Մասի ի 1874 ամի.

Գանձանակաւորամբ ժողովելոց ի հեղեցիս Աստրախանայ.	220	80
Դրամբ՝ գոյացեալք ի ներկայացմանէ Թատրոնի.	375	40
Արդիւնք կրպակաց Թումմայի Դաւթեանց.	147	87
Նուիրատրամբ Յակովբայ Կրանիլշչիկեանց.	300	
Դրամբ՝ հանեալք ի գումարաց եկեղեցեաց Աստրախանայ.	2027	50
Նուիրատրամ Թադէոսի Զաքարեան Շամխարեանց.	50	
Նուիրատրամբ երկսեռ բարերար Անդամից.	100	
Հանեալ ի ոռճկէ ուսուցչի միոյ.	1	
Նուիրատրամբ Յովհաննու Մարգանեանց.	7	88
Նուիրատրամբ Սարգսի Դալստեան Զանումեանց.	150	
Նուիրատրամբ Յովհաննու Հայրապետեան Մատուռեանց.	100	
Տոկոսատրամբ գումարաց եղեալ Սեմինարիոյի և ծխական դպրոցաց.	515	
Նուիրատրամբ ստացողաց զբաւիղբերական վկայականս ի Կոնսիստորիայէ.	58	10
Տոկոսիք կտակաւանդ գումարի Հանդուցեալ Փուրվարդանց.	300	
Դրամբ վաճառեալ գրանց.	59	20
Տուրք յաշակերտաց.	86	
Դրամբ՝ հանեալք ի տոկոսեաց դրամագլխոց աղքատաց.	300	
Նուիրատրամբ Եղիսաբէթի Հայրապետեան Թամազեանց.	100	
	4898—75	
Զարս հատ սերի բիլեթիք գնեալք ի գումարաց գրելոց ընդ յօդ. 6.	200	
Դրամատոմսակ նուիրեալ գումարաց ի Կրանիլշչիկեանց, որք ընդ յօդ. 8.	300	
Դրամատոմսակ նուիրեալ գումարաց ի Մատուռեանց, որք ընդ յօդ. 15	100	
Դրամատոմսակ նուիրեալ գումարաց ի Թամազեանց, որք ընդ յօդ. 22	100	
ընդ. գումար.	8166	38¼

Ծախք ի 1874 ամի.

Ի տարեկան ոռճիկ երկսեռ վերակացուաց և ուսուցչաց.	2857	26
Ի տարեկան ոռճիկ պահապանաց.	324	
Ի տարեկան ոռճիկ ժամագործի.	24	
Հանեալ ի ոռճկէ ուսուցչի միոյ որ գրեալ կայ ի մուրս 12 թ.	1	
Ի գին լուսանկարաց և շրջանակաց.	11	
Ի գին վառելափայտի ի պէտս երկսեռ դպրոցաց.	115	35
Ի գին դասական գրեանց.	74	69
Ի վարձ կազմարարի.	40	85
Ի գին ուսումնական պիտոյից՝ թղթի, թանաքի, գրչի, տողաշարի, քարտագրչի, կաւճի, ձեռագործուհեան զանազան նիւթոց ի պէտս օրիորդաց և ի նորոգութիւն ուսումնարանաց.	139	19
	3587—34	
Ծարդեանց՝ գոյացեալց ի ներկայացմանէ Թատրոնի գնեայն չորս սերի բիլեթիք, որք գրեալ են ի մուրս ընդ յօդ. 23.	200	
Նուիրատրամբ Կրանիլշչիկեանց՝ տուեալք ի դրամատուն վասն աճմանն տոկոսեաց, որոյ դրամատոմսակն գրեալ է ի մուրս ընդ յօդ. 24.	300	
Նուիրատրամբ Մատուռեանց՝ տուեալք ի դրամատուն վասն աճմանն տոկոսեաց, որոյ դրամատոմսակն գրեալ է ի մուրս ընդ յօդ. 25.	100	
Նուիրատրամբ Թամազեանց, տուեալք ի դրամատուն վասն աճմանն տոկոսեաց, որոյ դրամատոմսակն գրեալ է ի մուրս ընդ յօդ. 26.	100	
ընդ. գումար	4287	34

Ծանօթութիւն. Ընթացս 1874 ամի եղեալ են մուրք 4898 ր. 75 կ. և ծախք 3587 ր. 34 կ., զծախս իբաց բարձեալ ի մուրց՝ մնան 1311 ր.

41 կ., յորոց 700 ր. են գրամատոմսակք և 611 ր. 41 կ. առձեռն պատրաստական։ Ըստ այմ առ մէկն յունվարի 1875 ամի երկսեռ դպրոցք Աստրախանայ ունին գրամատոմսակք իշխարերութեան 3215 ր. և առձեռն պատրաստական գումար 664 ր. 4 1/4 կոպ. ընդ ամենն երիք հազար ութ հարիւր եօթանասուն հինգ բուբլի չորս և մի քառորդ կոպ. արծ.

ՄՇԱԿ ԼՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ.

Գանի քանի տէղերէն՝ մանաւանդ Տփղիսէն՝ Մշակ լրագրոյ մի ժամանակէ հետէ հետևած ընթացքը քննադատող, և նչմարածնի նկատմամբ թշնամական (?) և իբր թէ զԸրարատ պախարակելոյ երազայուղութեամբք մոլեալ հրատարակած ինչ ինչ պարբերութեանց և յօդուածոց ի պատասխանի՝ երկարաձիգ և ըստ մեծի մասին առանց չարագրիւ կրից՝ և օրինաւոր ապացուցութեամբք պարզեալ գրութիւններ կատանամբ՝ հրատարակելոյ թաղխանձանօք, որք՝ տարբեր տարբեր առիթներով՝ առարկայ եղած կէտերը ըստ արժանւոյն դիտելով և քննելով՝ կդատափետեն, յորոց երկու ապտու գրութիւնք հետևեալ խմաստից նման դիտողութեամբք կնքած են իւրեանց տողերը, թէ՝ մի անձն՝ որ միևչդեռ ինքն մշակուելոյ մեծապէս կկարօտի՝ ինչպէս կարող է այլոց մշակ հանդիսանալ, թէ՝ այն որ ՚այկականութեան մէջ շատ համբակ է՝ ինչպէս նա և ազգային կարևոր դիտութեանց մէջ, ինչպէս կարող է ՚այերէն օրինաւոր խմբագրութիւն կազմել, թէ՝ այն լրագրի խմբագրութիւն՝ որոյ հրատարակածները ըստ մեծի մասին ոչ ՚այկաբանութիւն ունին և ոչ պարզ խմաստը կը հասկացուին, ինչպէս կարող է այլոց հրատարակածները հասկանալ և քննադատել՝ ինչպէս նաև փորձառու չլինելով՝ ապագրական վրիպակները իմանալ, թէ՝ այն լրագիր՝ որ իբրև ՚այոց լրագիր և ՚այոց նկատմամբ ազգօգուտ մի որոշ ուղղութիւն և կազմուածն չունի, և ոչ ՚այոց կարօտութիւնքը և պէտքերը գիտէ, և շատ պարագայից մէջ աւելի օտար կամ մանաւանդ շահուց պաշտպան է, ինչպէս կարող է Ազգային միւս պարբերական թերթից դէմ խիզախել՝ գողցեալ պատգամներ որոտալ՝ և այն ՚այերէն ոճնուն կրկով, և թէ՝ լաւ չլինիլը՝ որ անուշը և փոխէ և պարզ դոյնը դոյգ տայ և՛ն, և՛ն։ Մէք այս ամենը Մշակի խմբագրութեան ուշադրութեան և կամաց յանձնելով, միանգամայն կը յայտարարեմք՝ զի արդէն Մշակի ընթացք բազմաց քաջածանօթ լինելով՝ նորա՝ ինչպէս նաև այլոց նմանօրինակ հրատարակութեանց աւելի կարևորութիւն չենք տար, և այս առիթով առ մեզ ուղղուած գրութեանց աշխատասիրներէն ևս ներողամտութիւն կխնդրեմք հրատարակութեան չյանձնելոյս համար, վասն զի Ընթերցասիրաց իրական կարօտութեան՝ և համեմատաբար՝ այժմեան ճաշակին օգտաւէտ լինելոյ համար հնարաւոր և անհրաժեշտ նկատելով բնռնաւորեալ է, և զրավաստակ և պատկառելի գրութեանց կարօտութիւն և թերթ չունի՝ որ աւելի կրկին թելադրութեանց արդիւնք եղած յարձակմունքներ խնդրոց կարգը դասէ և թերթեր մրատարէ ասյ։

— Այս ևս դիտել պէտք է, զի ամեն հրատարակութիւն որքան ևս անպիտան

ևս դատարկաբան լինի, դարձեալ իւր օգուտը և արդիւնքը ունի, գոնէ այսքանը ևս բաւական է իմանալոյ համար թէ՝ վատութիւնն եթէ չլինի՝ լաւութեան յարդը և արժէքը չիմացուիր։ —

Երբ եթէ Մշակ ևս անսխալ պատի ընթացք և հատզուամ բանած չէ և եթէ խրատ լսելոյ կղիջանի, կառաջարկեմք նմին՝ չարանախանձ և պախարակիչ յարձակմունքէն դադարիլ, իւր ընթացքը կշռել՝ ուղղել և Հայոց հարազատ օգտին նուիրական եղած շաւիղը պաշտպանել և ըստ այնմ իւր թերթը ի բարին արգիւնաւորել։

Իսկ եթէ ի՞նչպէ՞ս ոչ պէ՞ս ինձ հաճէսցին պատասխանը կտայ և այնպէս կը յարատևէ՝ կեղծ նամակներ ևս յիրիւրելով, ազան թէ անազան՝ Ազգի ողջամիտ մասին դատաստանն կարևոր վճիռը նմին կվտիտ բրինէ։

ՅԱՒՐԱՆԴԱԿԻ ԲԻՒՋԱՆԴԵԱՆ·

ԳՈՒԾՈՒՆԷՈՒԹԻՒՆՔ
ՊՕԼՍՈՑ ԵՐԵՍՓ. ԺՈՂՈՎՈՑ.

Պօլսոյ Հայոց Ներսէս. Ազգային Ժողովոյ վերջին (Թ և Ժ րդ) երկու նստի մէջ եղած գործունէութեանց արդեանց վերայ՝ հետևեալ տեղեկութիւնքը թէ և անցեալ Դեկտեմբերի ամսագրոյս մէջ հրատարակելոյ համար շարուած պատրաստ էր, սակայն նիւթոց շատութենէն ստիպեալ յետաձգել պարտաւորուեցանք և ներկայիս մեր ընթերցողաց հաղորդել արժան կտեսնեմք։

«Ըստ սովորութեան Նոյեմբեր 22 Ուրբաթ օրն Ազգային Ժողովն իւր Թ-րդ նիստն ըրաւ Գալաթիոյ Ս. Լուսաւորիչ Եկեղեցին՝ նախագահութեամբ Բարձրաշնորհ Ս. Պատրիարք Հօր և ներկայութեամբ Նահապետ էֆէնտի Ռուսինեանի և ներկայութեան 67 Երեսփոխանաց։

Ժամ 7 1/4 առեան բացուելով նախընթաց նիստի տեղեկագրութիւնը առանց որ և է դիտողութեան ընդունուեցաւ։

Օրակարգին անցնելէն առաջ՝ Բարձրաշնորհ Նախագահ Սրբազանն յայտնեց թէ՝ Վսեմ. Աբրահամ Փաշա Երամեան և Վսեմ. Սարգիս Պէյ Պալեան Ազգային պարտուց վճարման համար 3000* լիրա շնորհեցին Ազգին։

Ժողովն շնորհակալութեան քուէ տուաւ յիշեալ երկու բարերաստիճան ազգային ազնիւ բարերարաց՝ պարագ ընելով Դիւանին վերայ՝ որ այս շնորհակալութիւնը մի յատուկ ուղերձով հաղորդէ Վսեմ. Աբրահամ Փաշայի և Վսեմ. Սարգիս Պէյի։ յետոյ դարձեալ շնորհակալութեան քուէ տուաւ Բարձրաշնորհ Ս. Պատրիարք Հօր և Վսեմ. Սիմէոն Պէյի, որք իրենց պատկառելի միջնորդութեամբն այս շնորհը ձեռք բերելու պատճառ եղան և ազգին ուսէն պարտուց բեռը թեթևցուցին։

Ցետոյ օրակարգին անցնելով՝ Քաղաքական Ժողովոյ հրաժարեալ վեց անդամց տեղ նոր ընտրութեան ձեռնարկեց, և արդէն ընդունուած ցանկին մէջէն քուէից բացարձակ աւելութեամբ Քաղաքական Ժողովոյ անդամ ընտրուեցան հետեւեալ Մ.Ծ. Անձինքը։

Աբրահամ էֆէնտի	Հասենց	
Խաչիկ	»	Ալեմանեան
Կարապետ	»	Գ. Փափազեան
Մկրտիչ	»	Եսայեան

(*) Անցեալ (այս ինքն Նոյեմբերի) թերթի մէջ սխալմամբ 4000 գրուած էր։

Վհգ. Հայրապետ ևս օրհնութեան և շնորհակալութեան կոնդակներ գրեց յիշեալ երկու բարերարաց։ Այս առթիւ կոնդակներ գրեց նա և Ս. Պատրիարք Գեր. Ներսէս Արքեպիսկոպոսին և Վսեմ. Սիմէոն Պէյ Մաքսուտեանին։

Արժան կհամարինք յայտնել և զոյս, զի Աբրահամ փաշային, յանցեալ ամի գերեզմանատան խնդրոյ առթիւ, 1500 լիրայ ևս շնորհեց Ազգին։ Ե. Խ. Արտաւազդ։

Յակոբ Էֆէնտի Կոստանդեան
Սարգիս » Աբրահամեան

Սոյն ընտրութենէն յետոյ հին ատենագրութեանց վաւերացման խնդիրը մէջ դրուելով՝ հակիրճ վիճաբանութենէ մ՝ետեւ ամէնն ալ ընդունուեցան եւ վաւերացան։

Ատեանը գոցուեցաւ 15 օրէն նիստ ընելու որոշմամբ։

Լոյս ը. 15. Դեկտ.

Դարձեալ։

«Երեսփոխանական Ընդհ. Ժողովը այս Ուրբաթ օր (Դեկտ. 6) իւր սովորական նիստն ըրաւ, ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, և ատենապետութեամբ Տատեան Վսեմ. Ցարութիւն պէյի, որոյ արդիւնքն եղաւ

1. Նախորդ նիստին ատենագրութեան վաւերացումը։

2.—Պէկեան Թադէոս էֆ. և Տատեան Առաքել պէյ՝ Երեսփոխանութենէն հրաժարած ըլլալով, ժողովոյ կողմէն ատոնց հրաժարականաց ըստ օրինի ընդունուիլը։

3.—Ալէքսանեան Մատթէոս էֆ.ի մեկ դիտողութիւնը կարգացուեցաւ, որով կը յայտնէր թէ Պատրիարքարանը Պօլսոյ մէջ գաւառացիներէն ալ ընդհանուր տուրք կաւնու՝ գործի մը համար Պատրիարքարան գացած ատենին, մինչդեռ նոքա իրենց տեղերը տալ պարտաւորեալ են։ Եւ միանգամայն կը ծանուցանէր թէ Մուրադեայի տուրքը՝ որ գաւառաց մէջ Առաջնորդաց միջոցաւ կառնուի Պատրիարքարանի համար, արդար ու օրինաւոր կերպիւ բաշխուած չէ։

Այս դիտողութեան դէմ՝ Քաղաքական ժողովոյ կողմանէ Մամիկոնեան էֆէնտի պատասխանեց թէ, Քաղաքական ժողովը անցեալ Ուրբաթ աւուր նստին մէջ դիտողութեան առնելով ազգային ընդհանուր տուրց խնդիրը՝ յանձնաժողով մը կարգեց ծրագիր մը յօրինելու և Ընդհ. ժողովոյ վաւերացման ներկայացնելու համար։ Հետևաբար հարկ կըլլայ սպասել նոյն ծրագրին, և այժմ տրուց վիրաբերեալ որ և է խնդիր յուզել պատշաճ չէ։

Ժողովը գոհացուցիչ գտնելով Մամիկոնեան էֆ.ի այս առաջարկութիւնը, ըստ այնմ՝ սպասել պատշաճ համարեցաւ։

4.—Ղազարոսեան Քրիստոստուր էֆէնտին կառաջարկէ որ Քաղ. Ժողովոյ ընտրութեան համար համագումար դիւան գումարի, և անոնց կողմանէ ընտրվելաց ցանկ պատրաստուի՝ երբ նոր ժողով պիտի ընտրուի կամ մէծագոյն մասը հրաժարած է. իսկ երբ միայն մէկ քանին հրաժարած են՝ ցանկը միայն Ս. Պատրիարք Հօր և քաղաքական ժողովականաց կողմանէ պատրաստուի, ինչպէս եղաւ վերջին անգամ՝ և այս օրինաց կարգն անցնի։

Ժողովը որոշեց՝ այս առաջարկութիւնը Նախաքննութեան յանձնել։

5.—Ասկից ետքը Իփէկճեան էֆէնտիի մեկ առաջարկութիւնը լսուեցաւ։ Կը պահանջէր որ ժողովը շնորհակալութեան քուէ տայ նաև հին պարտուց համար հանգանակութեան նշող Խրիմեան սրբազանի, նոյն ժամանակի նուիրատուաց, և միանգամայն պարտատէրց՝ որոց առնելիքը երկար ատեն անվճար մնաց։

Ինչ ինչ դիտողութիւններէ յետոյ, Ժողովը որոշեց՝ առ այժմ ետ ձգուիլ այս գործողութիւնը, և նախ ի պաշտօնէ տեղեկագիրը։

6.—Ասոնց յաջորդեցին Ամեն. Ս. Պատրիարք Հօր երկու առաջարկութիւնները։

Ա.—Ընդհանուր ժողովոյ համար յատուկ խորհրդարանի մը պէտքը և արդէն երեսփոխանաց շատերուն կողմէն այս մասին մեծ փափաք տեսնելն յայտնելով՝ առաջարկեց որ պարտ ու պատշաճ տնօրէնութիւն ըլլայ։ Ժողովը Ն. Սրբազնութեան յանձնեց՝ մասնաժողով մը կազմել, խորհրդարանին տեղն և ծախուց ինչպէս հոգացուիլն որոշելու և տեղեկագրելու պաշտօնով։

Բ.—Ս. Պատրիարքը յայտով ծանուցանելով թէ ամեն օր այլ և այլ կողմէ աղքատիկ բայց ուսումնասէր պատանիք իւր վրայ կը թափին և իրենց ուսման ծարաւն անցունելու համար շիշերօթիկ վարժարան մը դրուիլ կը խնդրեն, և թէ՝ արդէն գիշերօթիկ վարժարանաց վիճակը սահմանափակ ըլլալով, — կառաջարկէր դիտո-

դուքեան առնուլ Մուրատեան վարժարանի խընդիրը, զոր՝ յարեցի ի սկզբան անդ պաշտօնակալութեանս ուշադրութեան առնելով՝ յանձնաժողով մը կազմել տուի առ ի կարևոր տեղեկագրութիւն, բայց արդիւնք մը չունեցաւ։

Այս խնդրոյն վրայ՝ երեսփոխանաց ումանց կողմանէ դիտողութիւններ լլլալէն յետոյ, միաձայն հաւանութեամբ որոշուեցաւ յղել ի նախաքննութիւն կալուածոց և պատիարակութեան մասնաժողովոց (դիւանաց) երեսփոխանութեան։

7· — Համարակալութեան և կալուածոց դիւաններէն պակասած անդամից տեղ ընտրուեցան Եուսուֆեան և Սիմիմարաճեան էֆէնտիները՝ համարակալութեան, և Աղնաւուրեան Ծովհաննէս էֆ· կալուածոց դիւանի համար։

8·—Ժողովը՝ այս միջանկեալ խնդիրներէն ետքը անցաւ Աղթամարայ . . . խնդրոյն։

. . . . . ,

Այս խնդրէն յետոյ ատենը գոցուեցաւ՝ երկու շաբաթէն ետքը ժողով գումարելու որոշմամբ։

Օրագիր, Թիւ 1440, Դեկտ. 10,

Ի ՄԱՆՉԵՍԹԵՐ

Պոհուքեամբ կընթերցուի Պօլսոյ Ազգային լրագրաց մէջ, զի Ասիոյ սովատանջ մերազնէից օգնութեան կհասնին ի Մանչսթեր գտնուած Հայք ևս քանիցս դրամ հաւաքելով և յղելով ի Պօլիս կազմուած ազգային գթութեան Յանձնաժողովոյն, ինչպէս հետևեալ քաղուածքին մէջ ընթերցողք կտեսնեն։

«Մանչսթերի մեծապատիւ ազգայնոց կողմանէ երրորդ անգամ 433 Անգղիական լիրա ղրկուեր էր ի նպաստ կարօտ մերայնոց։ Այսու 1133 լիրա կըլլայ՝ մինչև ցարդ ղրկուածին գումարը, և յոյս կայ թէ մինչև 1500 ի պիտի հասնի։

Ցիշեալ պատուական ազգայնոց այս ազգասիրական առատաձեռնութիւնը՝ ազգովին շնորհակալեաց և մշանջենաւոր յիշատակաց արժանի է։

Փունջ Թ. 946, Դեկտ. 18։

ԱԲՐԱՀԱՄ ՓԱՇԱ·

Վ.Հ. Սուլթանը Վսեմ. Աբրահամ փաշայի վրայ ունեցած բարձր սիրոյն և համարմանը նոր փորձ մ՚ալ տալ բարեհաճելով՝ այս օրերս Օսմանիեի առաջին ականակուռ պատուանշանն ու մեծ ժապաւէնը շնորհեց Նորին Վսեմութեան։

Վսեմ. Աբրահամ փաշան այս առթիւ իւր խորին շնորհակալութիւնը Վ.Հ. Սուլթանին մատուցանելէ զկնի, Պայսերական Պալատէն անմիջապէս Սպարապետի դուռը գնաց և Պայսրդրդի Բարձր. Եուսուֆ Իզզէտին էֆէնտիին և Մեծ Եպարքոսին այցելութիւն տուաւ։

Դիտակ, Թիւ 124·

ՀԱՅՔ

Ի ԹՐԱՆՍԻԼՎԱՆԻԱ ԵՒ Ի ՀՈՒՆԳԱՐԻԱ

ՎԱՂ ԵՒ ԱՐԴԻ ԹԱՄԱՆԱԿԱՑ ՄԵՋ·

Ա.

Հայաստան Ե. և Ը. դարերուն մէջ Քրիստոսէ յետոյ, երբ Միջին—Ասիոյ Հունգարացիք ճընշուելով մէկ կողմանէ Պարսիցմէն, մեկալ կողմանէ ալ Տաճիկներէն՝ Ոքսոս գետին մերձ եղող բնակութիւններն հոն թողլով և ուղիղ վեր Եաիքի և Վոլգայի մէջտեղուանքը բնակութիւններն հաստատեցին, մեծաւ մասամբ Արաբացւոց բեռան տակ ընկճելով՝ հզօր նախարարներուն իրաւանց ազդեցութիւնը տակ։ Մասամբ ըսի, քանզի Հայք անկէց ետև ալ՝ երբ Արաբացւոց յաջողեցաւ պարսկական գահը կործանելը շուրջ 637-ին Քրիստոսէ յետոյ, անմատոյց և անառիկ միջնաբերդերուն և քարաժայռերուն մէջ արիութեամբ իրենք զիրենք պաշտպանեցին, և սաստիկ ճակատներ մղեցին Արաբացւոց դէմ։

Այս անիշխանութեան դարուն ժամանակին մէջ մինչդեռ ազգին մեծերը իրենց հայրենիքը և ազատութիւնն պաշտպանելով՝ Մահմետականութիւնը զինուց զօրութեամբ ծաւալող Արաբացւոց դէմ, իրենց զօրութիւնը շարունակ պատերազմներով հատցուցին, և զօրաց նուազութեան

թիւը ոչ միանգամ ամբողջացուցին Հոն, Խազիր և ուրիշ Հունդար ցեղի ժողովուրդը իրենց վար-ձեալ գումարտակներովը, այլ շատ անգամ իրենք իրենց օդնեցին Մովկատու երկաթեայ դռները խոր-տակելու և Հայաստան մտնելու՝ զորոնք Արաբա-ցիք կը պահպանէին։

Այս սերտ յարաբերութիւնը՝ որ այս երկու ազգաց մէջ Արաբացւոց դէմ մղած ճակատնե-րուն մէջ հաստատուեցաւ, յետոյ ալ չդադրեցաւ՝ երբ նաև յաջողեցաւ որ Արաբացիք զՀունդարա-ցիք, որոնք իրենց յաճախ Հայաստան մտնելովը-նին, նոր տուգած Հայաստանի կալուածներուն նկատմամբ անհանգիստ կընէին։

Պէտք Հայ պատմագիրը Ծ. դարուն մէջ՝ որ Մահմետին և նորա յաջորդաց պատմութիւնը զը-րած է կը գրէ թէ՝ Խազրաց Խագան Թագաւորը իւր բանակին մէջ մնացական բազմութիւ Հայ պատերազմողներ կը պահէր, որոնց հաւատար-մութեանը և քաջութեանը վրայօք ամենէն աւե-լի վստահութիւն ունէր ճակատներուն մէջ 1։

Կոստանդին Խազրաց վրայօք կը գրէ, թէ ա-նոնց Գապար անուամբ ցեղը Հունգարաց հետ՝ զորոնք Թուրքեր կանուանէ նոյն է "Pars Caba-rorum — կըսէ — fugientes ad Turcas in Pacinacitarum terram se contulerunt ibique sedes posuerunt. . . . atque sic connexi inter se Cabéri cum Turcis Paci-nacrtarium terram incoluerunt" 2։

Գրեթէ նոյնը կը կարդանք իւր անանուն ար-ձանագրոց մէջ ալ՝ Ֆունաց վրայօք 3։

Որպէս զի Անանուն արձանագրոց մէջ Ֆունաց և Կոստանդինի Գապարներու նկատմամբ ոչ եր-կու տարբեր՝ այլ մէկ ժողովուրդ կարենանք Հաս-կընալ, նոյնը ստուգաբանեցին նաև Բրէյ և Վա-դոնայ և նոյնպես Կարոլոս Սապո Հունգարացի պատմագիրները, որուն մէջ գարձեալ նոյնէն ա-ւելի նոր ստուգաբանութիւնը լսանանք՝ թէ Հունդար ցեղի վերաբերեալ ժողովուրդները տարբեր տար-բեր անուններ կը կրէին՝ ուրիշ կերպ կանուա-նէին հայրենի պատմագիրներէն և ուրիշ կերպ արտաքիններէն։ Թէ ուր դիպեցաւ Խազրաց Հուն-գարացւոց հետ միաւորութիւնը՝ Թուրկանու-թեան պակասութեան պատճառաւ՝ անհնար է որոշել նոյնը. միայն այսչափ անոնց նկատմամբ գիտենք, թէ իրենց Պաննոնիա գալը յառաջ բե-րաւ և ցուցուց, որ բանը նպատակին բաւական կը համարիմ. քանզի ոչ այլ ինչ է դիտաւորու-թիւնս՝ եթէ ոչ ապացուցանել, թէ Հայք միա-ցեալ Խազրաց հետ՝ ի միասին ի միում ժամա-նակի եկան Հունգարացւոց. և այս կերպով տա-րակոյս չի վերցներ, որ մանանակցեցան Հայրենիք հաստատելու մեծ և ծանր ձեռնարկութեան մէջ։

Գործքն յայտնի է, որ Հայք Թ. և Ծ. դա-րուց մէջ բազմութեամբ իրենց գժբաղդ հայրե-նիքը Հոն Թողով, ուր Արաբացիք, Պարսիկք, և Սէլճուկ Տաճիկները անգթաբար աւերեցին և փճացուցին երկրին ժողովուրդը, յիշատակաց դարուց մէջ կը տեսնենք զիրենք Ցունաստանի ղօրաց մէջ, ուր առանձին բանակ կը կազմէին ընդ իշխանութեամբք ազգային զօրապետաց Պուլկարիոյ և փոքր Ասիոյ մէջ՝ որ աշ-խարհին գլուխը Թէոդորան էր, ինքն անձամբ Նախիջևանի Հայերը 1062ին ընդ դէմ Լեհաց յօգնութիւն կանչեց, Արքայական հրովարտակը որուն մէջ յետ ստացած յաղթութեան Թագա-ւորը Հայերը կալուածներով ազատ կացուցանե-լով ի Հարկաց և ուրիշ արտօնութեամբք կը վարձատրէ՝ յառաջ կը բերէ Միքայէլ Մէտիչիս իւր Լեհաստանի ստորագրութեանցը մէջ 1։

Ըստ իս՝ կարգաւորեցինն զիս Հունգար նախ-նի պատմական մեացորդաց Հաւատարիմ Թարգ-մանները, ժամանակագիրները, Սիմէոն Գէզաի և Թուրոցի, որոնք միաբան կը վկայեն՝ թէ Հայք են իրենց առաջնորդները և առաջին Հունգար Թագաւորաց ժամանակը եկան Ծաւալեցան Հուն-գարիոյ մէջ, որոնք երկար ժամանակ մէկտեղ բը-նակելով և նոցա հետ ամալնանալով՝ հուսկ ուրեմն Հունդար ազգին մէջ ձուլուեցան 2։

(1) Ինճիճեան. Նկարագրութիւն Հայոց. Ա. Հատ. էջ. 538։

(2) Constantinus Porphyrogenita. Imp. c. 39.

(3) Anonymus. c. X.

(1) Միքայէլ Մէտիչիս. Ձառապարտութիւն ի Լեհաստ. Վիեննէսի, 1830։

(2) Սիմէոն Գէզաի. Ժամանակագրութիւն Գլ. Ը։ Թուրոցի. Բ. Գէրգ. Գլ. ԻՌ։

Հունգարացի Հայ գաղթականաց նախնութեանը և նշանաւոր թուղն վրայօք կը վկայեն դարձեալ Կրան քաղքին Հայոց հայող թագաւորական հրովարտակները, զորոնք Գէորգ Ճերմակեան յառաջ կը բերէ և կը յիշատակէ իւր դեսպանագիտական հաւաքածոյից մէջ Դ. Պէլա թագաւորին և Լատիսլաւոս Գունի ժամանակէն։ Պէլա թագաւորը 1249ին Կրանի Հայոց առանձին առանձին առաւելութիւն ունեցող գիրը կը նորոգէ, ի վկայութիւն կանչելով իւր նախնի Հունգար թագաւորներէն ստացած Հայոց նման արտօնութիւնները, որովք առ հասարակ ծանուցեալ տէր էին՝ Մոնկոլ — Թաթարաց ձեռօք հանգիպած աւարառութեանց առթիւ, բոլորովին կորսուեցան։

Վկերը յիշուած դեսպանագիտական արձանագրութիւններէն և նշանակեալ մատենագրական ճոխութիւններէն զատ, գլխաւորաբար ի Թրանսիլվանիա Հայող այն բազմաթիւ տեղերը, որոնք երբեմն Հայ ժողովրդեան բնակութեան տեղի եղած էին, և իրենց ազգային անունը յետ այնչափ դարերէ մինչև ցայսօր ալ հաւատարմութեամբ պահեցին՝ թոյլ չեն տար տարակուսիլ, թէ ինչպէս երբեմն Թրանսիլվանիոյ հողը բազմաթիւ Հայ գաղթականներ ժողովրդաբնակ ըրին։

Քանի մը Հայ անուն կրող տեղութիւնք յիշեցնելու համար՝ պատշաճ համարեցայ նաև նոյները աստ տեղւև յառաջ բերելու։

Ակը — Ֆէյերմէկիէի մէջ (Սատրին - Սպիտակ-Գաւառ) Մարուշի ճանապարհի վրայ կը գտնուի Էօրթենէյէզ Վալաքերէն Աբրէն անուամբ երկիրը։

Գիւդիւլիւի վիճակին մէջ Սաս - Էօրթենիէշ, Վալաքերէն Էօրֆենէշ։

Գէօղէբ - Սղնոգ վիճակին մէջ՝ Զիլահ գիւղի քով Էօրթենիէշ։

Գոլոզ վիճակին մէջ Էօրթենիէշ անուամբ ճանապարհ և գիւղ։

Պէլշէօ - Սղնոգ վիճակին մէջ՝ Տէէզի ճանապարհի վրայ Օրման, Գերմաններէն Աբրենէն։

Արանէօշէզի մէջ՝ Էօրթենիէշ անունով տեղ և Էօրթենիէշ անուամբ առուս։

Այսպիսի բազմաթիւ՝ ի միմեանց բացակայ տեղերը, ճանապարհ մը և առուս մը, որոնց Հայ ազգի անունը Հունգար, Գերմանական և Վալաք լեզուաց աւելի յստակ կը հնչուին, իբրեանց այսպիսի յորջորջանքը ամենայն ապահովութեամբ ոչ այլոցմէ առին, եթէ ոչ երբեմն նոյն տեղերը և շրջակայքը բնակող Հայ ժողովուրդներէն։ Որովհետև՝ եթէ Գոզար, Գոզարվար, Քուն, Քուներց երկիր կոչուածը, Պէշենէօ (երկիր հնեթանոսաց), Օրոսֆալու (գիւղ Ռուսաց), Օրոսհէկի (լեառն Ռուսաց) և այլ տեղեաց անուններէն ըստ օրինի հետեւութիւն կը հանենք, թէ անուանեալ տեղերը իւրեանց անունները երբեմն անդ բնակող նոյն անուն ժողովուրդներէն ստացան, չեմ տեսներ՝ թէ ինչու համար պիտի չկարենայ վերը յիշատակած տեղեաց Հայ անուններն ալ Հայոց տրուիլ։

Սակայն պատմական յաւելուածներ ալ չեն պակասիր գլխաւորաբար Թրանսիլվանիոյ նախնի Հայոց վրայօք։ Անգրէաս Եղիայ կապակովցինէ, թէ Թալմա միջին դարու մէջ՝ նշանաւոր վաճառականութեան տեղը, Հայք, Ցոյնք և Հրէայք բնակեցան։ Կը կարդանք նաև Ծովսէպ Պէնքէօհանի պատմագրութեանը մէջ, թէ 1600ին Հոկտ. 25ին Լէց - Փալվայի մէջ եղած խորհրդոնոցին մէջ այնպիսի օրէնք յառաջ բերուած էր, որով Ցոյն և Հայ վաճառականք տէրութեան առջև ազատ էին։

Սէբվիզի (Գերեզկաջուր) մէջ 1872ին՝ անձամբ՝ Հայ դամբանագիր կրող գերեզմանաքար տեսայ, որն որ 1573 թուական կը կրէր, որոյ թուականը արդի գաղթող Հայոց ժամանակը աւելորդ դար մը յառաջ կապացուցանէ։

(Ի յառաջիկայս)

ԱՆՏՈՆ Ծ. Վ. ԹԱՐԳՄԱՆԵԱՆ

Քարոզիչ ի Խասգիւղ։